

## Լաչինի Միջանցքին Անցակետեր Ստեղծելու Հարց Նախատեսուած Զէ. Լաւրով

Նոյեմբեր 9-ի յայտարարութեամբ Լաչինի միջանցքին անցակետեր ստեղծելու հարց նախատեսուած է: Այդ մասին Պաքուի մէջ, Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար ձէյճուլու Պաշրամովի հետ համատեղ ատուլիսի ժամանակ յայտնած է Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրովը՝ անդրադառնալով իհնամ Ալիևի՝ Լաչինի եւ, այսպէս կոչուած, Զանգեզուրի միջանցքներուն անցակետեր տեղադրելու յայտարարութեան:

«Լաչինի միջանցքի գործելու կարգը պէտք է համապատասխանէ 2020-ի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան: Այդ կը նշանակէ ազատ տեղաշարժը ապահովել բացառապէս քաղաքացիական անձերու եւ մարդասիրական բեռերու համար: Անոր մենք կը ձգտինք մեր շփումներուն ժամանակ: Այնտեղ նախատեսուած է անցակետեր ստեղծելու հարցը, բայց կայ հնարաւորութիւն տեխնիկական սարքերով փարատելու կասկածները, որոնք կան: Մենք այսօր այդ քննարկած ենք, տեխնիկական մանրամասնութիւնները երկրորդական նշանակութիւն ունին», նշած է Լաւրով:

## Երեւանը Եւ Պաքուն Խաղաղութեան Պայմանագրի 3-4 Կետերու Շուրջ Տարածայնութիւն Ունին. Ալէն Սիմոնեան

Հայաստանն ու Ատրպէյճանը խաղաղութեան պայմանագրի 3-4 կետերու շուրջ առայժմ համաձայնութեան գալ չեն կրնար, խորհրդարանին մէջ լրագրողներու հետ զրոյցին յայտնեց Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանը՝ նշելով, որ որոշ առաջարկներու վերաբերեալ կողմերուն միջեւ կայ համախոհութիւն:

Խորհրդարանի խօսնակը մերժեց մանրամասնել... «Կարող եմ ասել, որ դրանք միջազգայնորէն ընդունուած սկզբունքներն են: Չի կարող 10 կէտ լինել, 10-ի շուրջ էլ անհամաձայնութիւն լինել, 3-4 կէտերում ունենք տարածայնութիւն», ըսաւ Ալէն Սիմոնեանը:

Վստահեցնելով, որ-Հայաստանը պատրաստ է կնքելու խաղաղութեան պայմանագիրը, Սիմոնեան ընդգծեց, որ անոր կը խոչընդոտեն Ատրպէյճանի կողմէ նորանոր առաջարկներու ներկայացումն ու սահմանային սադրանքները:

Աժ նախագահը կրկնեց, որ իր կարծիքով՝ Արցախի հարցը պէտք է ըլլայ խաղաղութեան պայմանագրին մէջ, սակայն, լաւելեց, որ այդ չի նշանակեր արցախահայութեան իրաւունքներէն հրաժարում:

Արեւմուտքի միջնորդութեամբ բանակցութիւններուն՝ Մոսկուայի քննադատութիւնը Սիմոնեանը շղատեց՝ որակեց՝ պնդելով, որ



Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

ուսական կողմը պէտք է աւելի զսպուած ու հանգիստ ըլլայ:

Ալէն Սիմոնեանի գնահատմամբ՝ Լաչինի միջանցքին փակումը աւելի մեծ վնաս պատճառած է Ատրպէյճանին, քան Հայաստանին եւ Արցախին՝ քաղաքական առումով, Ատրպէյճանը քաղաքական առումով յայտնուած է փակուղիի մէջ: Սիմոնեանը նման դիրքորոշում յայտնեց «Արմենփրես»-ի հարցին ի պատասխան: Արդարադատութեան

Շար.ը էջ 4

## «Standard and Poor's»-ը Վերահաստատած է Հայաստանի Վարկանիշը՝ Հեռանկարը Փոխելով «Կայուն»էն Դէպի «Դրական»

«Standard and Poor's» վարկանշային գործակալութիւնը վերահաստատած է Հայաստանի Հանրապետութեան՝ արտարժոյթով եւ ազգային արժոյթով երկարաժամկէտ/կարճաժամկէտ ինքնիշխան վարկաւորման «B+»/«B» վարկանիշները՝ միեւնոյն ժամանակ հեռանկարը փոխելով «կայուն»էն դէպի «դրական». կը տեղեկացնեն ՀՀ Ելեմուտքի նախարարութեան:

Համաձայն «Standard and Poor's» գործակալութեան դիտարկումներուն՝ վարկանիշի հեռանկարի վերանայումը պայմանաւորուած է Հայաստանի տնտեսութեան բարձր աճի կշռոյթներով եւ տնտեսութեան ներուժի բարելաւման հեռանկարով, պետական պիւտճէի ցուցանիշերու, պետական պարտքի բեռի եւ տնտեսութեան արտաքին դիրքի հակառակ բարելաւմամբ, ինչին նպաստած է նաեւ ուսում-ըրանական հակամարտութեան հետեւանքով մարդոց եւ դրամագլուխի հակառակ ներհոսքը:

Ընթացիկ վարկանիշին վրայ

Շար.ը էջ 6

## Լաիտի Դատարանը Կրնայ Իր Որոշումներու Կատարման Հետեւելու Համար 3 Դատաւորէ Կազմուած Կոմիտէ Ստեղծել. Եղիշէ Կիրակոսեան

Հիմա կը ստացուի, որ բացի 2020-ի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեանէն, եւս մէկ իրաւական պարտադիր փաստաթուղթ կայ, որ կը ձեւակերպէ Լաչինի միջանցքով անխափան անցնելու հանգամանքը կամ Ատրպէյճանի պարտաւորութիւնը այդ ապահովելու: Այս մասին մամուլի ասուլիսին ժամանակ նշեց Միջազգային իրաւական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշէ Կիրակոսեանը՝ անդրադառնալով ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային Դատարանի՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի կողմէ ներկայացուած ժամանակաւոր միջոցներ կիրառելու վերաբերեալ որոշումներուն:

Նշենք, որ Արդարադատութեան Միջազգային Դատարանը օրեր առաջ որոշեց ժամանակաւոր միջոց կիրառել՝ պարտաւորեցնելով Ատրպէյճանին ապահովել անխոչընդոտ անցումը մարդոց, բեռներու, փոխադրութեան միջոցներու Լաչինի միջանցքով:

Եղիշէ Կիրակոսեանը ըսաւ, որ այս որոշումը ունի նաեւ քաղաքա-



Միջազգային իրաւական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշէ Կիրակոսեան

կան հետեւանքներ եւ հիմա ալ անոնք արդէն կան. «Մի գուցէ շատ տեսանելի չեն: Առնուազն գնահատականի տեսքով հետեւանք լինում է: Եթէ մենք ունենում ենք տարբեր երկրներ, միջազգային կառույցներ,

Շար.ը էջ 5

## Յարգանքի Տուրք Սոււզայիթի Ջարդերու Զոհերու Յիշատակին



Հայաստանի ղեկավարութիւնը յարգանքի տուրք կը մատուցէ Սոււզայիթի ջարդերու զոհերու յիշատակին

1988 թուականի Փետրուար 27-29-ին Սոււզայիթի մէջ իրականացուած հայերու ջարդերու տարեկիցին վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանը, Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանն ու Անվտանգութեան Խորհուրդի անդամները այցելած են Միծեռնակաբերդի յուշահամալիր՝ յարգանքի տուրք


մատուցելու ոճրագործութեան զոհերու յիշատակին:

Բարձրաստիճան պաշտօնեաները ծաղկեպսակ դրած եւ ծաղիկներ խոնարհած են Ատրպէյճանի Սոււզայիթ, Կիրովապատ (Գանձակ), Պաքու քաղաքներուն մէջ ատրպէյճանական կառավարութեան կազմակերպած կոտորածներուն գոհացած հայերու յիշատակը յաւերժացնող խաչքարերուն:



# ԼՈՒՐԵՐ

## Տնտեսական Աշխուժութեան Ցուցանիշը Տարուան Առաջին Ամիսը Աճած Է 10.5 Տոկոսով



Հայաստանի տնտեսական աշխուժությունը 2023 թվականի առաջին եռամսյակում 10.5 տոկոսով աճել է նախորդ տարուան նույն ժամանակահատվածի հետ համեմատելի գներով: Այս մասին կը փաստեն ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրատարակած տվյալները:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը այս տարուան նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 1.4 տոկոսով: Շինարարության ծավալը այս տարուան նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 12.2 տոկոսով:

Առևտրի շրջանառության մեջ Յունուարին 2022-ի Յունուարի նկատմամբ աճել է 17.7 տոկոսով: Հայաստանի մեջ 2023 թվականի Յունուարին մատակարարության ծավալը այս տարուան նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 25.9 տոկոսով:

2023 թվականի Յունուարին սպառողական գիները ցուցակով 2022-ի Յունուարին համեմատ աճած է 8.1 տոկոսով: Արդյունաբերական արտադրանքի գիները ցուցակով Յունուարին նախորդ տարուան նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճած է 1.6 տոկոսով:

Իսկ ելեկտրականության արտադրության ծավալը այս տարուան առաջին ամիսը նախորդ տարուան նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 1.5 տոկոսով:

Արտաքին առևտրաշրջանառության ծավալը նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 93.8 տոկոսով: Ընդ որում՝ արտահանումը աճել է 2.3 անգամ, իսկ ներմուծումը՝ 72.5 տոկոսով:

### Ամուլսարի Ոսկու Հանքավայրի Շահագործումը Պիտի Վերսկսի



Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման դիմաց Հայաստանը պիտի ստանայ «Լիտիան Արմենիա» ընկերության բաժնետոմսերուն 12,5 տոկոսը:

Ազգային ժողովին մէջ Տնտեսական Հարցերու Մշտական Գործադիր Կոմիտեի նիստին ժամանակ տնտեսութեան նախարար Վահան Քերրեան յայտնած էր, որ «Լիտիան Արմենիա» ընկերութեան հետ 250 միլիոն տոլարի պայմանագիր պիտի կնքուի: Ճշդող հարցին՝ արդեօք կառավարութիւնը 250 միլիոն տոլարով պիտի գնէ՞ այդ բաժնետոմսերը, Տնտեսութեան նախարարութեան պատասխանեցին.

«Ոչ, կառավարութիւնը ոչ մի բան չի ծախսեր», ըսին Տնտեսութեան նախարարութեան:

Հայաստանի կառավարութիւնը 250 միլիոն տոլարի համաձայնագիր պիտի ստորագրէ «Լիտիան Արմենիա» ընկերութեան հետ, որուն կը պատկանի Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման արտոնագիրը: ՀՀ կառավարութեան, Եւրասիական Չարագացման դրամատան եւ «Լիտիան Արմենիա» ընկերութեան միջեւ պիտի ստորագրուի ԵՈՒԱՀ-ի փոխըմբռնման յուշագիր: ՀՀ կառավարութեան կողմէ փաստաթուղթը պիտի ստորագրէ ՀՀ տնտեսութեան նախարար Վահան Քերրեանը:

## Արցախի Նախագահի Հրամանագրով Ռուբէն Վարդանեանը Ազատուած Է Պաշտօնէն

Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Թարուծիւնեանի գլխաւորութեամբ տեղի ունեցած է կառավարութեան նիստ:

Թարուծիւնեան ներկայացուցած է Ատրպէյճանի կողմէ Արցախի շրջափակման հետեւանքով երկրին մէջ ստեղծուած ռազմաքաղաքական եւ ընկերատնտեսական իրավիճակը, իշխանութիւններուն կողմէ ձեռնարկուող միջոցառումները՝ ծագող խնդիրները լուծելու ուղղութեամբ:

Կառավարութեան նիստին նախագահ Թարուծիւնեան հրապարակած է նաեւ Ռուբէն Վարդանեանը պետական նախարարի պաշտօնէն ազատելու մասին հրամանագիրը: Ան բարձր գնահատած է Վարդանեանի ջանքերը թէ՛ Արցախի մասին միջազգային իրազեկուածութեան բարձրացման եւ թէ՛ շրջափակման ընթացքին ներքին բազմաթիւ հիմնախնդիրներու լուծման ուղղութեամբ:

«Այս ողջ ընթացքում ես եւ Ռուբէն Վարդանեանը եղել ենք միասին՝ ամէնօրեայ դրութեամբ հետեւելով ինչպէս Արցախում, այնպէս էլ արտաքին աշխարհում տեղի ունեցող իրադարձութիւններին, զարգացումներին, մշտապէս մտքեր ենք փոխանակել ստեղծուած իրավիճակում լուծումների շուրջ: Ես շնորհակալ եմ պարոն Վարդանեանին այն բանի համար, որ ինչպէս



Արցախի նախկին պետական նախարար Ռուբէն Վարդանեան

ընկերական, այնպէս էլ գործընկերային յարաբերութիւններում նա մշտապէս ձգտել է առաւելագոյն չափով ինձ հետ կիսել պատասխանատուութիւնը եւ ոչ թէ սահմանադրական կանոններին յղում անելով՝ փորձել այն բարդել ինձ վրայ: Բայց միւս կողմից նա գիտակցումով եւ ըմբռնումով էր մօտենում նաեւ Արցախում ստեղծուած վիճակի ու հետագայ բոլոր խնդիրների համար իմ անձնական պատասխանատուութեան ծաւալին ու չափին», ընդգծած է երկրին ղեկավարը:

### Կալանաւորուած Է Արարատ Միրզոյեանը Սպանելու Փորձ Կատարած Անձերէն Մէկը

Ձերբակալուած եւ երկու ամիսով կալանաւորուած է 2020-ի Նոյեմբեր 10-ի գանգուածային անկարգութիւններու ընթացքին Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանը սպաննելու փորձ կատարած անձերէն մէկը՝ Թ.Ա.-ն, տեղեկացուցած է Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը:



Նոյեմբեր 9-ի գիշերը, երբ յայտնի դարձաւ դարաբաղեան պատերազմին հայկական կողմի պարտութեան եւ գինադադարի եռակողմ յայտարարութեան ստորագրման մասին, Երեւանի մէջ անկարգութիւններ սկսան, յարձակման ենթարկուեցան Ազգային ժողովի, կառավարութեան շէնքերը, Ազգային ժողովի մօտակայքին դաժան ծեծի ենթարկուեցաւ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյեանը: Անոր ծեծին գործով կան մեղադրեալներ:

ԱԱԾ-ն փոխանցած է, որ Թ.Ա.-ն Նոյեմբեր 10-ին տեղեկանալով որ կառավարութեան, Ազգային ժողովի վարչական շէնքերուն եւ վարչապետին յատկացուած կեցավայրին մօտ, անոնց ներսը զանգուածային անկարգութիւններ կը կատարուին, զացած է Երեւանի Դեմիրճեանի եւ Պոռոջեանի փողոցներու խաչմերուկը:

Տեսնելով ինքնաշարժին մէջ խցանման մէջ զստուող Արարատ Միրզոյեանը, բոտ ԱԱԾ-ի, «տուեալ անձը միացել է Միրզոյեանի նկատմամբ բռնութիւն գործադրող զանգուածային անկարգութիւն-

ների մասնակիցներին, ճեղքելով վերջիններին շարքերը, մօտեցել է արդէն գետնին ընկած Արարատ Միրզոյեանին եւ վերջինիս պետական գործունէութիւնը դադարեցնելու նպատակով, նրան սպաննելու դիտաւորութեամբ, այլոց հետ միասին ոտքերով հարուածներ է հասցրել Միրզոյեանի գլխին եւ մարմնի տարբեր մասերին, ինչի արդիւնքում վերջինիս պատճառուել է՝ դիմային գանգի ոսկրերի բազմակի կոտորուածքներ եւ այլ վնասուածքների ձեւով մարմնական վնասուածքներ, ինչի հետեւանքով Արարատ Միրզոյեանը կորցրել է գիտակցութիւնը»:

Ինչպէս Ծառայութիւնը կը նշէ՝ յանցագործութիւնը չէ իրագործուած, քանի որ Միրզոյեանի անվտանգութիւն աշխատակիցներու միջամտութեան շնորհիւ ԱԺ նախագահը տեղափոխուած է «էրեբունի» բժշկական կեդրոն եւ ստացած է համապատասխան բժշկական օգնութիւնը:

Չանգուածային անկարգութիւններու գործով նախաքննութիւնը կը շարունակուի, մօտ մէկ տասնեակ մարդ արդէն դատապարտուած է տարբեր պատժաչափերով:

# ԼՈՒՐԵՐ

## ՄԱԿ-ը 44-Օրեայ Պատերազմին Վարձկաններ Ներգրաւելու Համար Մեղադրական Նամակներ Ուղարկած Է Ատրպէյճանին Եւ Թուրքիոյ



Վարձկաններու կիրառման հարցերով ՄԱԿ աշխատանքային խումբի անդամներու ասուլիսը

Արցախի դէմ 2020 թուականին սանձազերծուած պատերազմին վարձկաններ ներգրաւելու համար ՄԱԿ-էն մեղադրանքներ ուղարկուած են Ատրպէյճանին ու Թուրքիոյ: Այս մասին ասուլիսի ընթացքին ըսին վարձկաններու կիրառման հարցերով ՄԱԿ աշխատանքային խումբի Հայաստան ժամանած անդամները՝ անդրադառնալով լրագրողներու հարցումներուն:

Խումբին մանտաթը ձեւաւորուած է ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքներու Խորհուրդի նախաձեռնութեամբ: Աշխատանքային խումբին մանտաթը լայն է, այն կ'ընդգրկէ վարձկաններու ներգրաւումը եւ մասնաւոր ռազմական եւ պահանջարկային ընկերութիւններու օգտագործումը՝ մարդու իրաւունքներու խախտումներու տեսանկիւնէն: Այդ մանտաթի ծիրին մէջ աշխատանքային խումբը կ'իրականացնէ այցելութիւն երկիրներ, եւ Հայաստան այցելութիւնը անոնցմէ մէկն է: Խումբը տարբեր աղբիւրներէ կը ստանայ հաղորդումներ՝ մարդու իրաւունքներու ենթադրեալ խախտումներու վերաբերեալ:

«Մեր խումբը 2020 թուականին արդէն ստացած է հաղորդում՝ վարձկաններու օգտագործման վերաբերեալ: Եւ այդ ժամանակ մենք արդէն արձագանգած ենք, գործած ենք, համապատասխան հաղորդագրութիւններ կայացուցած ենք», ըսաւ խումբի անդամ Ելենա Ապարաքը, որ Խումբի խոսնակն է:

Խումբին այցելութիւնը Հայաստան բաւականին երկար ժամանակ նախապատրաստուած է Հայաստանի իշխանութիւններուն հետ:

«Այս պահուն մեզի հասած տեղեկատուութիւնը հիմնականին մէջ կը վերաբերի երկու վարձկաններուն, որոնք գերի վերցուցած են, որոնց մեղադրանք ներկայացուած է, դատական գործընթաց սկսած է, լսումներ տեղի ունեցած են: Մենք այդ ամէնուն վերաբերեալ դեռ կը հաւաքագրենք տեղեկատուութիւնը», ըսաւ ան:

Խումբը կը գործէ իրեն տրամադրուած տեղեկատուութեան հիման վրայ, որ կրնայ տրամադրուել հասարակական կազմակերպութիւններէն կամ որեւէ այլ աղբիւրէ: Փաստ արձանագրելը տեղի կ'ունենայ պաշտօնական գործընթացով, այսինքն՝ տեղեկատուութիւնը կը ստանան պաշտօնական աղբիւրէ, եւ այդ տեղեկատուութեան հիման վրայ կրնան որոշել, թէ ով է իրադարձութիւններուն համար պատասխանատու կողմը: Աշխատանքային խումբի անդամները յիշատակեցին, որ 2020 թուականին Մենք այդ կը ներկայացնենք պետութիւններուն եւ ոչ-պետական կառույցներուն», նշեց Ելենա Ապարաքը:

Անդրադառնալով ճշդող հարցին, թէ արդեօք Ատրպէյճանին եւ Թուրքիոյ մեղադրական նամակներ ուղարկուած են՝ ան դրական պատասխան տուաւ:

«Մենք ունինք այսպիսի գործիք՝ «մեղադրական նամակ», ինչ որ ըրած ենք 2020 թուականին: Մենք այդ կը ներկայացնենք պետութիւններուն եւ ոչ-պետական կառույցներուն», նշեց Ելենա Ապարաքը:

Անդրադառնալով ճշդող հարցին, թէ արդեօք Ատրպէյճանին եւ Թուրքիոյ մեղադրական նամակներ ուղարկուած են՝ ան դրական պատասխան տուաւ:

Աշխատանքային խումբը 2020 թուականի իր թեմատիկ զեկոյցներուն մէջ նկատած է, որ համաշխարհային մակարդակով կը շատնայ վարձկաններուն եւ մասնաւոր պահանջարկային ընկերութիւններուն օգտագործումը: Ինչ կը վերաբերի մեղադրական նամակներու հետեւանքներուն, ապա, ցաւօք, աշխատանքային խումբին մանտաթը այդ հարցով բաւականին սահմանափակ է:

«Մենք կրնանք պատասխաններ ստանալ: Այդ պատասխանները հրապարակային են: Եւ յետոյ արդէն միւս շահագրգիռ կողմերը պէտք է օգտագործեն մեր այդ մեղադրական նամակները, արձագանգները եւ անոնց հիման վրայ գործողութիւններու դիմեն» պիտի ըլլան հասարակական կազմակերպութիւնները, միջազգային կազմակերպութիւնները, այլ պետութիւններ», ըսաւ Ելենա Ապարաքը:

Ռափիւնտրան Տանիէլը նկատեց, որ իրենց աշխատանքին պատճառով խնդիրները աւելի տեսանելի կը դառնան, ինչ որ տեղի ունեցաւ 2020 թուականին:

Աշխատանքային խումբի անդամները դրական կը գնահատեն, որ Հայաստանը վաւերացուցած է ՄԱԿ-ի՝ «վարձկաններու հաւաքագրման, օգտագործման, ֆինանսաւորման եւ ուսուցման դէմ» միջազգային ուխտը:

Աշխատանքային խումբը յայտ ուղարկած է Ատրպէյճան այցի համար, բայց տակաւին պատասխան չէ ստացած:

## Ամենակարեւորը Այն Է, Որ ԼՂ Բնակչութիւնը Ձգայ, Որ Կրնայ Ապահով Ապրիլ Այն Վայրերուն Մէջ, Ուր Ապրած Են Տասնամեակներ Եւ Դարեր Շարունակ. Թոյլօ Քլար

«Վերջին քանի մը օրերուն հետաքրքրական զարգացումներ կը տեսնեմ, եւ հիմա ստացուեցան ելեկտրականութեան եւ կազմի վերականգնման մասին հաղորդումները», այս մասին «Ազատութիւն» ռատիօկայանին տուած հարցազրոյցին մէջ յայտարարած է Հարաւային Կովկասի եւ Վրաստանի մէջ ճգնաժամի հարցերով ԵՄ յատուկ ներկայացուցիչ Թոյլօ Քլարը:


«Այդ ծիրին մէջ ես լիաշուք եմ, որ ամէն ինչ ճիշդ ուղղութեամբ կ'ընթանայ: Եւրոմիութիւնը հետեւողական հանդէս եկած է Լաչինի միջանցքի ապաշրջափակման օգտին: Մենք տարբեր շփումներ ունեցած ենք եւ քուլիսներուն մէջ, եւ հրապարակային: Եւ ընդհանրապէս մենք հաստատ համոզուած ենք, որ կարեւորը այն է, որ Ղարաբաղի բնակչութիւնը, տեղի հայերը կարենան իրենց ապահով զգալ այն վայրերուն մէջ, ուր կ'ապրին, եւ անոր համար կարեւոր է, որ իրական երկխօսութիւն մեկնարկէ Պաքուի եւ Ստեփանակերտի միջեւ», յայտնած է ան:

Պատասխանելով հարցումին՝ արդեօք ԵՄ-ն կը դիտարկէ՞ պատժամիջոցներու հնարաւորութիւն Ատրպէյճանի նկատմամբ, Քլար պատասխանած է. «Կրկին կը կարծեմ, որ մենք տեսած ենք որոշակի յուսադրող զարգացումներ վերջին օրերուն»:

## Ֆրանսայի ԱԳՆ-ն Յայտարարութիւն Տարածած Է Լաչինի Միջանցքին Վերաբերեալ Լաիտի Դատարանի Որոշման Մասին

Ֆրանսայի Արտաքին Գործերու Նախարարութիւնը յայտարարութիւն տարածած է ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային Դատարանի որոշման առնչութեամբ:

«Ֆրանսան ուշադրութեամբ հետեւած է եւ ի գիտութիւն ընդունած է Արդարադատութեան Միջազգային Դատարանի 2023 թուականի Փետրուար 22-ի որոշումը՝ կապուած Լաչինի միջանցքին մէջ տիրող իրավիճակին հետ: Յեղապաշտական խտրականութեան բոլոր ձեւերու վերացման մասին միջազգային ուխտի հիման վրայ



Հարաւային Կովկասի եւ Վրաստանի մէջ ճգնաժամի հարցերով ԵՄ յատուկ ներկայացուցիչ Թոյլօ Քլար

քանի մը օրերուն: Եւ ես յոյս ունիմ, որ մօտ ապագային հնարաւոր պիտի ըլլայ եւ ապրանքներու, եւ մարդոց ազատ տեղաշարժը Լաչինի միջանցքով, ինչպէս այդ եղած է նախապէս: Այդ ծիրին մէջ կրկին ամենակարեւորը այն է, որ բնակչութիւնը զգայ, որ կրնայ ապահով ապրիլ այն վայրերուն մէջ, ուր անոնք ապրած են տասնամեակներ եւ դարեր շարունակ»:

դատարանը խնդրած է, որ մինչեւ վերջնական որոշում կայացնելը Ատրպէյճանը ձեռնարկէ իր տրամադրութեան տակ եղած բոլոր միջոցները՝ ապահովելու մարդոց, փոխադրական միջոցներու եւ ապրանքներու անխոչընդոտ տեղաշարժը երկու ուղղութեամբ: Ֆրանսան կը չի շեղնէ իր անսասան աջակցութիւնը Արդարադատութեան Միջազգային Դատարանին եւ անոր որոշումներուն պարտադիր բնոյթը, ներառեալ՝ նշեալ խափանման միջոցները», կ'ըսուի յայտարարութեան մէջ:

## Խաղաղութեան Պայմանագրի 3-4 Կէտերու

Շարունակուած էջ 1-էն

Միջազգային Դատարանի որոշման անդրադառնալով՝ Աժ նախագահը նշեց, որ Հայաստանը այս որոշումը առաւելագոյնը միջազգային բոլոր ատենաներուն մէջ պիտի օգտագործէ, պիտի ըլլան նաեւ այլ որոշումներ:

«Միջազգային առումով բաւականին մեծ յաջողութիւններ ենք գրանցում եւ շարունակելու ենք այդ ուղղութեամբ աշխատել: Իմ գնահատմամբ՝ Լաչինի միջանցքի փակումն աւելի մեծ վնաս պատճառեց Ատրպէյճանին, քան Հայաստանին եւ Արցախին՝ քաղաքական առումով: Այո՛, մենք տուժեցինք, այո՛, մենք ծանր ենք տանում, այո, մեր

հայրենակիցները փակուած են, մենք խնդիրներ ունենք: Սակայն, իմ գնահատմամբ, քաղաքական առումով Ատրպէյճանը յայտնուել է փակուող մէջ», ըսաւ Սիմոնեան՝ չաւելելով, որ սա պէտք է օգտագործուի: Անդրադառնալով հարցին, թէ Լաչինի միջանցքին ապաշրջափակումը՝ Լաչինի դատարանի որոշման կատարումը կրնա՞յ բանակցութիւններուն մէջ նախապայման ըլլալ՝ Աժ նախագահը ըսաւ, որ Հայաստանը չի բանակցի Լաչինի միջանցքին վերաբերեալ, որովհետեւ Լաչինի միջանցքին վերաբերեալ կայ բանակցուած եւ ստորագրուած փաստաթուղթ՝ Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութիւնը:

# Հայաստանի Արտաքին գործերու նախարարը Կարելորած է Միջազգային Փաստափաստաբան Առաքելութեան Գործուղումը Լաչինի Միջանցք Եւ Լեռնային Ղարաբաղ



Արարատ Միրզոյեանի հանդիպումը Փախստականներու հարցերով ՄԱԿ գերագոյն յանձնակատար Ֆիլիփո Կրանտիի հետ

ՄԱԿ-ի Մարդու իրաւունքներու խորհուրդի բարձրաստիճան նիստի ծիրին մէջ Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը հանդիպում ունեցած է Փախստականներու հարցերով ՄԱԿ գերագոյն յանձնակատար Ֆիլիփո Կրանտիի հետ:

Զրուցակիցները քննարկած են Հայաստանի եւ Փախստականներու հարցերով ՄԱԿ գերագոյն յանձնակատարի գրասենեակին միջեւ հաստատուած համագործակցութեան հետագայ զարգացման առնչուող հարցեր:

Արարատ Միրզոյեանը եւ Ֆիլիփո Կրանտիին անդրադարձած են 2020 թուականի 44-օրեայ պատերազմին եւ ՀՀ ինքնիշխան տարածքին նկատմամբ Ատրպէյճանի յարձակման հետեւանքով ստեղծուած մարդասիրական խնդիրներուն՝ ընդգծելով անոնց հասցէագրման հրատապութիւնը: Այս ծիրին մէջ քննարկուած են նշեալ իրադարձութիւններու ընթացքին տեղահանուած անձերու աջակցութեան հարցեր:

Հանդիպման ընթացքին շեշտուած է նաեւ Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած մարդասիրական բարդ իրավիճակը հանգուցալուծելու անհրաժեշտութիւնը: Նախարար Միրզոյեան կարեւորած է միջազգային փաստաճանաչումը առաքելութեան գործուղումը Լաչինի միջանցք եւ Լեռնային Ղարաբաղ, ինչպէս նաեւ ՄԱԿ համապատասխան մարմիններու, այդ շարքին՝ Փախստականներու հարցերով գերագոյն յանձնակատարի գրասենեակի անխոչընդոտ մարդասիրական մոտեցումը Լեռնային Ղարաբաղ:

## Լաչինի Միջանցքը Բանալու Ուղղութեամբ Այս Պահուն Կ'աշխատի Ռուսական Կողմը. Արցախի Նախագահի Խօսնակ

Լաչինի միջանցքը բանալու ուղղութեամբ այս պահուն կ'աշխատի ռուսական խաղաղապահ զօրակազմը, «Ազատութեան» տեղեկացուց Արցախի նախագահի խօսնակ Լուսինէ Աւանեսեանը:

Անցեալ Ուրբաթ Պաքուի եւ Ստեփանակերտի ներկայացուցիչներուն միջեւ տեղի ունեցած հանդիպման ժամանակ քննարկուած էր նաեւ Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհի բացման հարցը: Թէ յստակ ինչ պայմանաւորուածութիւններ ձեռք բերուած են այս ուղղութեամբ, յստակ չէ:

«Միջանցքը բացելու ուղղութեամբ ռուսական կողմն է շարունակում աշխատել: Այս պահի դրութեամբ որեւէ նորութիւն չունենք: Արցախեան կողմի դիրքորոշումը մէկն է՝ միջանցքը սահմանուած է 2020 թուականի Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեամբ, եւ այն պէտք է գործի այդ յայտարարութեան համաձայն», ըսաւ ան:

Հարցին, թէ երբ կը նշէ, որ ռուսական կողմը կ'աշխատի այդ ուղղութեամբ, կա՞ն որոշակի յոյսեր, կը տեսնեն դրական տեղաշարժ, որ պիտի ըլլան փոփոխութիւններ, նախագահին խօսնակը արձագանգեց. «Շրջափակման իւրաքանչիւր օրը մենք ապրում ենք



Արցախի նախագահի խօսնակ Լուսինէ Աւանեսեան

նման յոյսով»:

Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը կը շարունակէ փակ մնալ արդէն 78 օրէ: Չէ վերականգնուած նաեւ Հայաստանէն Արցախը սնող միակ ելեկտրագիծը: Չնայած անցեալ Ուրբաթ Արցախի եւ Ատրպէյճանի ներկայացուցիչներուն միջեւ ձեռք բերուած պայմանաւորութեան՝ ատրպէյճանական կողմը դեռ թոյլ չի տար սկսիլ բարձրաժողով գիծի վերանորոգման աշխատանքները:

## ՀՀ Նախագահը Սուրիահայ Համայնքին Հետ Քննարկած է Երկրաշարժին Յառաջացուցած Դժուարութիւններու Յաղթահարման Ուղիները



ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրեան հանդիպում կ'ունենայ Հայաստանի մէջ հաստատուած սուրիահայ համայնքի խումբ մը ներկայացուցիչներուն հետ

Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանը ընդունած է Հայաստանի մէջ հաստատուած սուրիահայ համայնքի խումբ մը ներկայացուցիչներ, որոնց հետ քննարկուած են վերջերս Սուրիոյ մէջ տեղի ունեցած երկրաշարժին հետեւանքները եւ յառաջացած դժուարութիւնները յաղթահարման ուղիները, ինչպէս նաեւ համայնքին յուսով շարք մը խնդիրներ: Հանդիպման մասնակցած են Հայաստանի մէջ Սուրիոյ արտակարգ եւ լիազօր դեսպան Նորա Արիսեանը, դեսպանութեան Սուրիահայ Համայնքի Յանձնաժողովի ատենապետ, բժիշկ ծորձ Բարսեղեանը, յանձնաժողովի այլ անդամներ, դեսպանատան աշխատակիցներ, գործարարներ:

Ոչ-պաշտօնական, անմիջական գրոցի ընթացքին նախագահ Խաչատուրեան եւ մէկ անգամ իր խորին ցաւակցութիւնը յայտնած է Սուրիոյ բարեկամ ժողովուրդին աղէտալի երկրաշարժին առիթով, որ հարիւրաւոր անմեղ զոհերու, վիրաւորներու եւ հսկայական աւերածութիւններու պատճառ դարձած է:

«Դժբախտութեան ժամանակ պարտաւոր ենք միմեանց օգնել: Մենք ամենօրեայ շփումների մէջ ենք Սիրիայի մեր գործընկերների հետ եւ մեր ունեցած հնարաւորութիւնների սահմաններում փորձում ենք մեղմել ձեր ցաւը: Ուզում եմ մէկ անգամ եւս ցաւակցել Սիրիայի ժողովրդին: Ամենակարեւորն այն է, որ ձեր մէջ ուժը չպակասի, յոյսը չկորչի», ըսած է նախագահը:

Կը նշուի, որ սուրիահայերը բարձր գնահատած են այդ դժուարին օրերուն Հայաստանի կառավարութեան անփոխարինելի օգնութիւնը: Դեսպան Նորա Արիսեանը նշած է, որ Հայաստանը եւս մէկ անգամ ապացուցած է, որ Սուրիոյ լաւագոյն բարեկամներէն մէկն է եւ կանգնած է Սուրիոյ կողքին: Անոր խօսքով՝ նոյնիսկ Հայաստանի սովորական քաղաքացիները դիմած են իրենց՝ Սուրիոյ օգնութեան ձեռք մեկնելու ցանկութեամբ:

Հանրապետութեան նախագահը յոյս յայտնած է, որ Սուրիան մօտ ապագային կը կարենայ դժուարութիւնները յաղթահարել եւ ոտքի կանգնիլ, եւ շեշտած է իր պատրաստակամութիւնը հնարաւորինս աջակցել սուրիահայ համայնքի խնդիրներու յաղթահարման եւ լաւագոյն աւանդութիւններ ունեցող հայ-սուրիական բարեկամական յարաբերութիւններու խորացման:

Հանրապետութեան նախագահը յոյս յայտնած է, որ Սուրիան մօտ ապագային կը կարենայ դժուարութիւնները յաղթահարել եւ ոտքի կանգնիլ, եւ շեշտած է իր պատրաստակամութիւնը հնարաւորինս աջակցել սուրիահայ համայնքի խնդիրներու յաղթահարման եւ լաւագոյն աւանդութիւններ ունեցող հայ-սուրիական բարեկամական յարաբերութիւններու խորացման:

## Լաիտի Դատարանը Կրնայ

Շարունակուած էջ 1-էն

որոնք սկսում են այս հարցի մասին խօսել, գնահատական տալ, օրինակ, Ատրպէյճանի կողմից որոշման չկատարմանը, դա արդէն հական հետեւանք կարելի է համարել: Այդ հետեւանքների կուտակման արդիւնքում էլ արդիւնք ենք ստանում: Երբ 10-15 պետութիւններ սկսում են նոյն բանը պնդել կամ միջազգային կազմակերպութիւնները կոչ անել, դա ձնագնդի ազդեցութեամբ կարող է հասնել ինչ-որ արդիւնքների: Ճանապարհը սա է:

Այս ժամանակաւոր միջոցը կիրառուած է «Հայաստանը ընդդէմ Ատրպէյճանի» մեծ գործի

շրջանակներում, եւ մինչեւ հիմնական գործի քննութիւնը մենք այս ապացուցները ներկայացնելու ենք դատարանին: Այսինքն մենք դատարանին ներկայացնելու ենք Ատրպէյճանի չկատարումները կամ Ատրպէյճանի կողմից դատարանի որոշումները խախտող քայլերը»:

Եղիշէ Կիրակոսեանը նաեւ տեղեկացուց, որ ըստ դատարանի կանոններուն, դատարանը ունի հնարաւորութիւն ստեղծելու երեք դատաւորէ կազմուած կոմիտէ, որուն նպատակն է հետեւիլ դատարանի որոշումներու կատարման ընթացքին: Հնարաւոր է նաեւ փաստաճանաչում առաքելութիւն գալ, բայց այդ ուղղութեամբ պէտք է աշխատանք տարուի:

# ԱՄՆ Դեսպանը Ծիծեռնակաբերդի Յուշահամալիրին Մեջ Յարգանքի Տուրք Մատուցած է Հայոց Ցեղասպանութեան Ձոռերու Յիշատակին



Հայաստանի մէջ ԱՄՆ նորանշանակ արտակարգ եւ լիազօր դեսպան Քրիսթինա Քվին այցելեց Հայոց Ցեղասպանութեան յուշահամալիրը:

Հիւրերը դիմաւորեց եւ յուշահամալիրի ստեղծման պատմութիւնը ներկայացուց Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէն Յարութիւն Մարութեանը: Ան անդրադարձ կատարեց նաեւ Ծիծեռնակաբերդի տարածքին անցեալ դարավերջին Ատրպէյճանի Սուլթանիթ, Կիրովպատ (Գանձակ), Պաքո քաղաքներուն մէջ ատրպէյճանական կառավարութեան կազմակերպած կոտորածներուն զոհ գացած հայերու յիշատակին տեղադրուած երեք խաչքարերու եւ Արցախեան զոյւմարտի տարիներուն Յուշապատի դիմացի հատուածին մէջ յուղարկւելու ճինգ ազատամարտիկներու պատմութիւններուն՝ շեշտելով կապը տեղի ունեցածին եւ Հայոց Ցեղասպանութեան միջեւ:

Քրիսթինա Քվին ծաղկեպսակ դրաւ Հայոց Ցեղասպանութեան զոհերուն յիշատակը յաւերժացնող յուշակոթողին, այնուհետեւ հիւրերը ծաղիկներ դրին անմար կրակին մօտ եւ մէկ վայրկեան լուռութեամբ յարգեցին Հայոց Ցեղասպանութեան ան-

մեղ զոհերուն յիշատակը:

Յարութիւն Մարութեան անոնց պատմեց Յուշապատին մասին, որու յետնամասին յատուկ խորշերու մէջ ամփոփուած են 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարակգրին թրքական կառավարութեան իրագործած հալածութիւններու կոտորածներու եւ ցեղասպանութեան դէմ իրենց բողոքի ձայնը բարձրացրացուցած օտարազգի շարք մը հասարակական, քաղաքական գործիչներու, մտաւորականներու եւ միսիոներներու գերեզմաններէն վերցուած հողով լի փոքր սափորները:

Հիւրերը շրջեցան նաեւ Հայոց Ցեղասպանութեան թանգարանին մէջ, ուր թանգարանային աշխատանքներու փոխտնօրէն Լուսինէ Աբրահամեանի ուղեկցութեամբ ծանօթացան մշտական եւ ժամանակաւոր ցուցադրութիւններուն, որմէ յետոյ Քրիսթինա Քվին զրառում կատարեց Պատուաւոր հիւրերու յուշամատենին մէջ:

Շնորհակալութիւն յայտնելով այցին համար՝ տնօրէն Յարութիւն Մարութեան ԱՄՆ դեսպանին նուիրեց «The Armenian Genocide Prelude and Aftermath. As reported in the U.S. Press. The New York Times ( Vol. I 1890-1914, Vol II 1915-1922)» երկհատորեակը:

## «Standard and Poor's-ը վերահաստատած է

### Շարունակուած է 1-էն

դրական ազդեցութիւն կը գործեն արտաքին պաշտօնական ֆինանսաւորման աղբիւրներու հասանելիութիւնը եւ մաքրոտնտեսական քաղաքականութեան ողջամիտ շրջանակը, ինչ որ վերջին տարիներուն բազմաթիւ արտաքին ցնցումներու պայմաններուն մէջ օգնած է պահպանել տնտեսական եւ ֆինանսական կայունութիւնը:

Գործակալութեան գնահատմամբ յառաջիկայ ամիսներու ընթացքին տնտեսական աճի բարձր մակարդակի, ինչպէս նաեւ հարկապիտանեցումի քաղաքականութեան, վճարային հաշուեկշիռին եւ ֆինանսական կայունութեան առջնորդ վտանգներու կառավարելիութեան պարագային Հայաստանի ինքնիշխան վարկանիշը ենթակայ պիտի ըլլայ բարձրացման: Ընդ որում՝ այդ գործին մէջ կ'ընդգծուի նաեւ Արժույթի Միջազգային Հիմնադրամին հետ իրականացուող պահեստային (կանխարգելիչ) ծրագրին կարեւորութիւնը:

Համաշխարհային անորոշութիւններու պարագային գործակալութեան կողմէ յատուկ ուշադրութեան արժանացած են 2022 թուականի Հայաստանի 12.6% տնտեսական աճը, ինչպէս նաեւ կառավարութեան պարտք/ՀՆԱ ցուցանիշի նշանակալի նուազեցումը, ինչ որ մեծապէս պայմանաւորուած էր տնտեսական բարձր աճով, պիւտճէի՝ ծրագրաւորուածէն ցած բացով եւ ԱՄՆ սողարին նկատմամբ ՀՀ դրամին արժեւորմամբ: Ընդ որում գործակալութեան գնահատմամբ յառաջիկայ տարիներուն տնտեսական աճի ներուժը մեծ հաւանականութեամբ պիտի աճի, իսկ պարտքին բեռը պիտի պահպանուի կայուն եւ կառավարելի մակարդակի մէջ:

Գործակալութիւնը առանձնացուցած է նաեւ Հայաստանի էական կախուածութեան բացակայութիւնը ուժանիւթակիրներու միջազգային բարձր գիներու ազդեցութենէն՝ նշելով Ռուսիոյ Դաշնութեան հետ բնական կազմի մատակարարման երկարաժամկէտ պայմանագրերու առկայութիւնը:

# ՆԳՆ-ի Մեջ Պարգևատրուած ԵՆ Թուրքիոյ Եւ Սուրիոյ Աղետի Գօտիին Մեջ Աշխատանքներ Իրականացուցած Փրկարարները



Ներքին գործերու նախարար Վահէ Ղազարեանի հրամանով երկրաշարժի հետեւանքով տուժած Թուրքիոյ եւ Սուրիոյ մէջ որոնողափրկարարական աշխատանքներ իրականացուցած խումբ մը փրկարարներ պարգևատրուած են մետալներով եւ յուշանուէրներով: Ներքին Գործերու Նախարարութեան Փրկարար Ծառայութեան տնօրէն, ներքին գործերու նախարարի տեղակալ Կամօ Յուրուլեանը հանդիսաւոր պայմաններու մէջ պարգևները յանձնած է փրկարարներուն:

Տնօրէնը ներքին գործերու նախարարին եւ անձամբ իր անունով շնորհակալութիւն յայտնած է փրկարարներուն, իրենց դրսևորած մասնագիտական բարձր պատրաստակամութեան եւ մարդկային

որակներուն համար, շեշտելով որ իւրաքանչիւր լաւ աշխատանք միշտ արժանի գնահատական պիտի ստանայ:

Յուրուլեանը մասնաւորապէս նշած է. «Ուզում եմ ընդգծել, որ ձեր առջեւ դրուած խնդիրները կատարել էք արհեստավարժ բարձր մակարդակով: Հայկական քաղաքային որոնողափրկարարական երկու խումբերն էլ լաւագոյնս կատարեցին իրենց մարդասիրական առաքելութիւնը՝ դրսևորելով ուժ, կամք, աշխատասիրութիւն եւ անվերջ փրկարարի վառ օրինակ»:

Արարողութեան աւարտին տնօրէնը եւս մէկ անգամ շնորհակալութիւն յայտնած է փրկարարներուն, վերջիններու մաղթելով բարի եւ անփորձանք ծառայութիւն:

## Լաչինի Միջանցքը Բացուելու

### Շարունակուած է 2-էն

համաձայնութիւնները, այդ միջանցքով ականներ է տեղափոխել, որոնք յետոյ օգտագործուել են ատրպէյճանական դիրքերի մօտ տարածքներ ականապատելու համար: Այնտեղ փոխադարձ շատ մեղադրանքներ կան, նշել էր ռուս պաշտօնեան՝ յաւելելով՝ հարցը առաջիկայ ժամանակում կը կարգաւորուի: Առաջիկայ ժամանակ ասելով, ենթադրում ենք, Լաւրովը նկատի ունէր հենց Հաւաքայի դատարանի կողմից կայացուցելիք որոշումը (մասնաւորապէս Ատրպէյճանի հայցի մասով), որից էլ կախուած էր լինելու միջանցքի ճակատագիրը եւ դրա ռեժիմը:

Յատկանշական է, որ դատարանի որոշումը ժամանակավրէպ եւ ոչ լեգիտիմ է դարձնում նաեւ Լաչինի ճանապարհի թափանցիկ օգտագործման եւ վերջին երկու տարիների ընթացքում չարաչահումների դէպքերի կանխման վերաբերեալ Ատրպէյճանի մտավախութիւնը եւ այդ պատճառով անցակէտի տեղադրումը, որին, ինչպէս քիչ վերը տեսանք, ձայնակցում էր նաեւ ՌԴ-ն: Ահա թէ ինչու էր Ատրպէյճանը պնդում, որ միջանցքում՝ դրա թափանցիկ օգտագործումը երաշխաւորող մեխանիզմները անցակէտ տեղադրուի: Անցակէտի տեղադրումը ժամանակավրէպ լինելուց գատ, նաեւ հակասում է ռուսական միջնորդութեամբ ստորագրուած եռա-

կողմ յայտարարութեան ոգուն եւ տառին: Եւ եթէ ՌԴ-ն որոշի դաշնակցային փոխգործակցութեան յարաբերութիւնների համատեքստում ընդառաջել Ատրպէյճանին եւ ՀՀ-ին պարտադրել վերաբանակցել Նոյեմբերի 9-ի յայտարարութիւնը՝ անցակէտի մասով նոր պայմանաւորուածութիւն ձեռք բերելու համար, ապա բացի այն, որ այնուսալի միջոնորդի համբաւ ձեռք կը բերի եւ ինքն իր ձեռքով կապալեգիտիմացնի խնդրոյ առարկայ յայտարարութիւնը, այլեւ ընդդէմ իր շահերի քայլ արած կը լինի՝ գիշեր միջանցքի նկատմամբ անվերապահ վերահսկողութիւնը Ատրպէյճանին, վերջինիս՝ միջանցքով անխոչընդոտ երթեւեկը երաշխաւորողից դարձնել նաեւ վերահսկող ֆունկցիա ունեցողի:

Ատրպէյճանը գոնէ այս փուլում, ենթադրում ենք, կը սառեցնի միջանցքում անցակէտ տեղադրելու հարցի քննարկումը՝ թոյլ տալով ՌԴ-ին փրկել դէմքը թէ՛ ՀՀ-ի, թէ՛ Արցախի եւ թէ՛ մասնաւորապէս հաւաքական Արեւմուտքի առաջ՝ փորձելով վերահաստատել տարածաշրջանում հարցեր լուծողի իր կարգավիճակը: Որպէսզի շատացուի այնպէս, որ Հաւաքայի դատարանը որոշեց, Ալիեւը ստիպուած կատարեց, իսկ ինքը՝ ՌԴ-ն, մնաց բորտին, այն դէպքում, երբ ի՛ր խաղաղապահներն են կազմուած Լաչինի միջանցքում:

# Ջորակցական Ընդունելուքին Ի Պատիւ «Արարատ» Օրաթերթի Տնօրէնուհի Ընկերուհի Անի Եփրեմեանի



Արեւմտեան Ամերիկայի ՄԴ-ՀԿ Մամլոյ Դիւանի կազմակերպութեամբ անցեալ Շաբաթ, Փետրուարի 25-ին, 2023 տեղի ունեցաւ զօրակցական պատշաճ ընդունելութիւն մը ի պատիւ Պէյրութի «Արարատ» օրաթերթի տնօրէնուհի Ընկերուհի Անի Եփրեմեանի: Սոյն միջոցառումի հովանաւորն ու հեղինակներն էին ընկեր եւ ընկերուհի Յարութ եւ Լիւսի Պոյամեանները, որոնք այլ առիթներով, եւս միշտ օգտակար եղած են նման ազգօգուտ միջոցառումներուն:

Աւելի քան քառասուն հրաւիրեալներու մէջ կը նշմարուէին Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան եւ Արեւմտեան Ամերիկայի ղեկավարութեան ու տարբեր կառուցներու պատասխանատուներ ինչպէս նաեւ հիւրաբար քաղաքս գտնուող Գանատայի Մոնթրէալ քաղաքի ՄԴ-ՀԿ Վարիչ Մարմնի ատենապետ ընկեր Մարգիս Գաւլազեանը:

Որպէս հիւրընկալ եւ ՄԴ-ՀԿ Սպաս Գիւլ մասնաճիւղի ատենապետ ընկ. Յարութ Պոյամեան իր եւ իր կնոջ Լիւսիի անունով բարի գալուստի ջերմ խօսքերով ողջունեց ներկայութիւնը օրուան գլխաւոր հիւրին՝ ընկերուհի Անի Եփրեմեանին եւ միւս հրաւիրեալներուն, որոնք կլիմայական խիստ աննպաստ պայմաններուն իսկ սիրայօժար ընդառաջած էին հրաւերին:

Օրուան հանդիսավար «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական ղեկ. Գաբրիէլ Մոլոյեան, կազմակերպիչ յանձնախումբին եւ ներկայներուն անունով շնորհակալութիւն յայտնեց հիւրընկալ Պոյամեան գոյգին եւ ապա ողջունեց սփիւռքահայ մամուլի կարկառուն դէմքերէն, «Արարատ» օրաթերթի վաստակաշատ տնօրէնուհի եւ Լիբանանի Նոր Սերունդ Մշակութային Միութեան Ժրջան ատենապետուհի՝ ընկերուհի Անի Եփրեմեանի ներկայութիւնը: Անուհետեւ, մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգուեցաւ Արցախի 44-օրեայ պատերազմի եւ Թուրքիոյ ու Հալէպի երկրաշարժերու նահատակներու յիշատակը:

Վաստակաշատ մտաւորականուհի Անի Եփրեմեան խօսք առնելով, շնորհակալութիւն յայտնեց իրեն ի պատիւ եղած ջերմ ընդունելութեան եւ զօրակցական վերաբերմունքին համար: Ան հանգամանօրէն անդրադարձաւ Լիբանանի այժմուս իրավիճակին մասին, որով ներկայիս երկիրը ճգնաժամային շրջան մը կը բոլորէ, քաղաքեան եւ յատկապէս տնտեսական ոլորտներէն ներս, ստեղծելով խիստ անկայուն իրավիճակ: Բնականաբար այս կացութիւնը մեծապէս ազդած է նաեւ հայ գաղութին եւ հաստատութիւններուն վրայ: Մեր մամուլն ալ՝ իր հերթին, ի գին մեծ դժուարութիւններու, կը շարունակէ իր առաքելութիւնը եւ կը մնայ պատենէի վրայ, միշտ կանգուն, շնորհիւ իր տեսլապաշտ եւ զոհաբերող աջակիցներուն եւ ընթերցասէր հասարակութեան նեցուկին:

Ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ օրուան հիւրերէն Գանատայի Մոնթրէալ քաղաքի ՄԴ-ՀԿ Վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Մարգիս Գաւլազեան: Ան ամփոփ տեղեկութիւններ տուաւ շրջանի գաղութային եւ ընկերային կեանքի մասին:

Սոյն միջոցառումին զօրակցական ելոյթներ ունեցան ՄԴ-ՀԿ-ի տարբեր միաւորներու ներկայացուցիչներէն՝ Սեւակ Խաչատրեան (ՀԱԽ եւ «Կայծ»), Ռոզին Տէր Դաւիթեան (ՀԿԲՄ), Վարդան Գոճապապեան (ՀՄՄ), Յարութ Տէր Դաւիթեան (ՆՍՄՄ), Վարդան Քէօօրոյեան եւ Խաչիկ Քէշիշեան (ՄԴ-ՀԿ Կեդր. Վարչ. Կ. Ե. Կ. Ե. Կ. Ե.):

«Ընկեր» երգը՝ ինքնագիր յորինում ըլլալով մեծ ապրումով մեներգեց երաժշտութեան հեղինակ՝ Յարութ Տէր Դաւիթեանը, արժանանալով ներկայներու բարձր գնահատականին:

Տեղույն վրայ տեղի ունեցան սրտաբուխ նուիրատուութիւններ ի նպաստ «Արարատ» օրաթերթի ընթացիկ կենսական ծախսերուն: Գրեթէ բոլոր ներկայներն ալ իրենց սիրայօժար մասնակցութիւնը բերին այս օգտաշատ նախաձեռնութեան: Նոյնիսկ կարգ մը սկսեցին բացակայներ իրենց սրտաբուխ նուէրներն առաքած էին այդ վսեմ նպատակին համար:

Փակման խօսքով հանդէս եկաւ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Վազգէն Խոտանեան: Ան իր շնորհակալութիւնները յայտնեց օրուան հիւրընկալ գոյգին եւ ներկայներուն իրենց զօրակցութեան եւ նիւթական աջակցութեան համար: Իսկ ընկերուհի Անի Եփրեմեանին մաղթեց յարաւետութիւն, անկուն կամք եւ քաջողութիւն, յաջողութեամբ յաղթահարելու համար առկայ բոլոր մարտահրաւերները:

«Տուր Ձեռքը Ընկեր» կուսակցական մաղթերգի հաւաքական կատարումով վերջ գտաւ սոյն միջոցառումը: Ներկայները մեկնեցան յիշարժան երեկոյի մը լաւագոյն տպաւորութիւններով:

# Անճոռանալի ու Անփոխարինելի Մասիս Արարատեանը



Ընկերային խմբակար Զախէն աջ՝ Պերճ Զոլաքեան, դոկտ. Զաւէն Մարլեան, տոքթ. Ժան Մոմճեան, Մասիս Արարատեան (հանգուցեալ), տոքթ. Գեորգ Քեշիշեան (հանգուցեալ), Վաչէ Սեմերճեան, Ենովթ Պալիքեան, Դրաչ Մանուկեան (հանգուցեալ):

Մահուրէն մի քանի օրեր առաջ էր, երբ հեռախօսով կը զրուցէի Մասիսին հետ, բնաւ չէի ակնկալել եւ ոչ ալ տեղեկ էի իր անհանգստութենէն: Նկարագրով խիստ գաղտնապահ էր ու բնաւ չէր արտայայտուէր իր առողջութեան մասին: Դժբախտաբար, շուտով ան մեզմէ յաւերժ պիտի բաժնուէր:

Բնածին գուարթամութեամբ օժտուած երգիծանկարիչ մըն էր Մասիս եւ միշտ պատրաստ ըսելիք մը ունէր, երբ հանդիպէր իր բարեկամներուն:

Սուր դատողութեամբ եւ առարկայական վերլուծումով ու բժախնդրութեամբ կը հետազօտէր եւ կը ներկայացնէր ճշմարտութիւնը, կը գծէր եւ կը ստեղծէր օրուան պատշաճ երգիծանկարները՝ միշտ նկատի առնելով քաղաքական նպատակաշարժարութիւնը, միաժամանակ որդեգրելով յատկապէս հաւասարակշռուած կեցուածք:

Մասիսին համար ներողամտութիւնը տկարութեան նշան չէր, այլ արտացոլումն էր իր նկարագրի եւ ոգիի զօրութեան: Ընկերասէր եւ հանդարտաբարոյ անձ մըն էր, անտարակոյս՝ խիզախ արուեստագէտ մը: Միշտ կը լիչէր իր մտերիմները, նոյնիսկ բոլոր անոնք, որոնք այլեւս ներկայ չէին եւ մեկնած էին դէպի անդէնական:

Մեղմ խօսելով ու համեմուած պատմելով կը հմայէր բոլորը, մանաւանդ իր կատակասէր նկարագրով: Ուրախ եւ երջանիկ էր իր հեզահամբոյր կողակից Մարոյով, որ անհուն խանդաղատանքով ու հոգատարութեամբ կը խնամէր զինք, ինչպէս նաեւ՝ իր երկու

զաւակներով, Արագով եւ Սեւակով, ու թոռնիկներով, որոնք մեծցած էին հայաշունչ ոգիով եւ դաստիարակութեամբ:

Ակամայ, կը մտաբերենք սփիւռքահայ արուեստագէտներու սակաւնալու երեւոյթը, եւ տխրութիւնը սարսափելի սաստկութեամբ կը ճնշէ մեր հոգիները:

Մասիս այն հայ արուեստագէտն էր, որ իր գիտակից, ուղղամիտ, գործնական արժանիքները նուիրած էր հայ երգիծանկարչութեան արուեստի բարգաւաճմանը: Հաւատարիմ էր հայկական տոհմային արժէքներուն, մշակոյթին ու աւանդութեան եւ մանաւանդ արուեստագէտի իր խոհուն հոգիով սերտօրէն եւ երախտագիտութեամբ կապուած էր հայրենի հողին:

Այժմ, երբ ան մեզի հետ չէ՝ կը մտաբերեմ իր դէմքը, բնական ու քաղցր ժպիտով լիացած, որովհետեւ կը հաւատար «Ժպիտը Լոյս է» բնաբանին, զայն դարձնելով իր հեղինակած գոյգ հատոր գիրքերուն խորագիրը:

Մասիսին ներդրումը մեծ էր երգիծանկարչական արուեստի բնագաւառին ներս, որով իր ազգօգուտ ծառայութիւնը կը բերէր հայ ժողովուրդին: Բայց աւանդ, իր մեկնումով մարեցաւ Մասիս արուեստագէտի լուսարձակող ջանք սփիւռքահայ իրականութեան մէջ:

Խորունկ թախիծով կը սգամ Մասիսին մեկնումը դէպի յաւերժական լուծութիւն՝ այս օտար ափերուն:

Բիւր յարգանք իր յաւերժ յիշատակին:

Սգակիր կրտսէր բարեկամդ՝ Պերճ Զոլաքեան:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel:-----
Email: -----

### ՀՀ Դեսպան Վարուժան Ներսիսյանի Այցը Իրլանդա



Փետրուար 21-ին Հայաստանի դեսպան Վարուժան Ներսիսյանն Իրլանդա կատարած աշխատանքային այցի ծիրին մէջ հանդիպած է Իրլանդայի Ներկայացուցչներու Պալատի Նախագահ Շոն Օ. Ֆերկինգլի հետ:

Հանդիպման ընթացքին կողմերը միտքեր փոխանակեցին Հայաստանի եւ Իրլանդայի միջեւ խորհրդարանական համագործակցութիւնը խթանելու, ինչպէս միջխորհրդարանական տարբեր կառուցներու մէջ երկու երկիրներու նախաձեռնութիւններուն փոխադարձ աջակցութիւնը ցուցաբերելու վերաբերեալ:

Դեսպան Վ. Ներսիսյանն Իրլանդայի խորհրդարանի նախագահին ներկայացուց Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի անօրինական շրջափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ շարունակուող ծանր մարդասիրական ճգնաժամը եւ ընդգծեց միջազգային հանրութեան կողմէ վճռական քայլերու անհրաժեշտութիւնը՝ ուղղուած Լաչինի միջանցքի անխոչընդոտ երթեկուցութեան վերականգնման:

Զրուցակիցները անդրադարձան նաեւ Հայաստան-Իրլանդա յարաբերութիւններու ներկայ օրակարգային հարցերուն, փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող տարբեր ոլորտներու մէջ երկկողմ համագործակցութեան ընդլայնման եւ խորացման հեռանկարներուն, այդ շարքին՝ միջխորհրդարանական աշխույժ փոխգործակցութեան միջոցով:

Փետրուար 22-ին Ներսիսյանը Իրլանդա կատարած աշխատանքային այցի ծիրին մէջ հանդիպեց Իրլանդայի Արտաքին Յարաբերութիւններու եւ Պաշտպանութեան Յանձնաժողովի նախագահ Չարլզ Ֆլանականի հետ:

Հանդիպման ընթացքին դեսպան Վ. Ներսիսյանը ընդգծեց Հայաստանի եւ Իրլանդայի միջեւ միջխորհրդարանական համագործակցութեան կարեւորութիւնն ու փոխայցելութիւններու օգտակարութիւնը հայ-իրլանդական երկկողմ օրակարգի ընդլայնման գործին մէջ:

Կողմերը քննարկեցին Հայաստանի եւ Իրլանդայի միջեւ բազմակողմ հարթակներու, ինչպէս նաեւ Հայաստան-Եւրոմիութիւն գործընկերութեան շրջանակներուն մէջ, համագործակցութեան կարեւորութիւնը: Այս առումով դեսպանը կարեւորեց Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ միջազգային սահմանին երկարաժամկէտ դիտորդական առաքելութիւն տեղակայելու ԵՄ որոշումը՝ յոյս յայտնելով, որ առաքելութիւնը կը նպաստէ տարածաշրջանին մէջ կայունութեան հաստատման:

Դեսպան Վ. Ներսիսյանն վերահաստատեց Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակումը վերացնելու եւ 2020 թուականի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեամբ սահմանուած երթեկուցութեան կանոնաւոր շարժը վերականգնելու հրատապ անհրաժեշտութիւնը՝ առանց օրեւէ նախապայմանի:

Դեսպան Ներսիսյանն Յանձնաժողովի նախագահին ներկայացուց նաեւ Հայաստանի արտաքին եւ անվտանգութեան քաղաքականութեան առաջնահերթութիւնները, լայնածաւալ ժողովրդավարական բարեփոխումները՝ ուղղուած փտածութեան դէմ պայքարին, մարդու իրաւունքներու ապահովման ու

Շար.ը էջ 14

### «Սերային Քայլերով» Կրթանպաստ Հիմնուեցաւ՝ Ա. Ե. Մ. Յովսէփեան Վարժարանէն Ներս

Մեր դպրոցի սաներէն Սէրային Այնթապեանին վաղաժամ մահը, որ պատահեցաւ Մարտ 24, 2022ին, ցնցեց բոլորս: Արդէն շուտով մահուան տարեկիցը պիտի չի շուրջ մեր անուշիկ Սէրային, որ անցեալ տարուան Յունուար ամսուն պիտի բոլորէր իր ծննդեան 21րդ տարեդարձը: Իր տարեդարձին օրը անոր ծնողները՝ Ժաննա եւ Ճենի Այնթապեանները «Սէրային Քայլերով» կրթանպաստ մը հաստատեցին իր սիրելի դպրոցէն՝ Ա. Ե. Մ. Յովսէփեան Վարժարանէն ներս: Սոյն կրթանպաստէն պիտի օգտուին այն աշակերտները, որոնք կը գոհացնեն կարգ մը պայմաններ: Կրթանպաստին նպատակը անշուշտ Սէրային չի շատակը վառ պահելն է եւ օգտակար հանդիսանալ ու գնահատել այն աշակերտները, որոնք Սէրային նման տիպար են, կ'իւրացնեն անոր նկարագրի գիծերէն եւ ունին իրեն նման հետաքրքրութիւններ եւ կը ցուցաբերեն սէր ուսման հանդէպ:

Այս տարեշրջանին համար երկու աշակերտներու միջեւ բաժնուեցաւ կրթանպաստը, որ տարեկան 3000 տոլար է: Յառաջիկայ տարեշրջաններուն կրնայ այս նպաստը բաժնուիլ մինչեւ երեք աշակերտներու միջեւ եւ կամ միայն մէկ արժանի աշակերտի մը տրուի. Այնթապեան ծնողքին համաձայնութեամբ՝ ընտրութիւնը ձգտուած է տնօրէնութեան:

Հոս կ'արժէ նշել, որ Սէրային երկնային տարեդարձին օրը, Յունուար 20ին, մեր տնօրէնութեան, ուսուցչակազմին, եկեղեցւոյ հոգա-



բարձութեան ու հոգեւոր հովիւին նախաձեռնութեամբ նշուեցաւ անոր տարեդարձը եւ իր չի շատակը յաւերժացնող Sr (Strontium) քիմիական նիւթին ցուցատախտակը նուիրուեցաւ եւ գետեղուեցաւ մեր դպրոցէն ներս գտնուող քիմիական նիւթերու աղիւսակին վրան: Տնօրէն Շահէ Մանկրեանը խօսք առնելով յայտարարեց, որ Սէրային երկրորդ ընտանիքը հանդիսացող Յովսէփեան Վարժարանի տնօրէնութիւնն ու ծնողաուսուցչական մարմինը, յետ այսու ամէն տարի Սէրային տարեդարձին օրը, ամբողջ աշակերտութեան հոգեճաշ պիտի մատուցէ անոր չի շատակին համար:

Ուխտած ենք անուշիկ եւ տիպար՝ Սէրային, չի շատակը վառ պահել եւ չթառամեցնել զայն: Պետրոս Դուրեանի խօսքով՝ ... Եւ չի շատակս ալ թառամի, Ա՛հ, ա՛յն ատեն ես կը մեռնիմ:

# URGENT APPEAL FOR ALEPPO

Once again, our communities are hit hard following the recent devastating earthquake that hit Turkey and Syria. Our fellow Armenians lost loved ones. Residential structures, community centers, businesses and, above all, educational institutions suffered significant damages.

**Our brothers and sisters in Aleppo & the Guiligian School need your urgent help...**

The Armenian Educational Benevolent Union - AEBU, with all its chapters, is appealing to all of you to give and to give generously to help rebuild this very important beacon of education for Armenians in Aleppo for many decades and secure a safe learning environment for our children.

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

In collaboration with GUILIGIAN BENEVOLENT FOUNDATION - USA

Please donate now at:

AEBU.ORG/ALEPPO

You may also send your donations by check to: AEBU 1060 N. Allen Avenue Pasadena CA 91104



## Alen Simonyan: Russia Should Be More Restrained and Admit That it Cannot Ensure Armenia's Security

YEREVAN -- The Speaker of Parliament Alen Simonyan called on Moscow to be more restrained and admit that it is unable to ensure Armenia's security as stipulated by Russian-Armenian treaties and the CSTO treaty.

Speaking to reporters, Simonyan said Russia certainly plays a role in the normalization of Armenian-Azerbaijani relations, and Russian peacekeepers are deployed in Nagorno-Karabakh, but its angry and emotional reaction to others' efforts to help Armenia and Azerbaijan normalize their relations is incomprehensible.

In response to the deployment of some 100 EU monitors to Armenia's border with Azerbaijan Russia accused the European Union of trying to squeeze it out of the South Caucasus. In an official statement, the Russian Foreign Ministry argued that the civilian monitoring mission will not reduce the risk of fresh fighting on the Armenian-Azerbaijani border.

"I think Russia should be a little more calm, restrained and should understand that Armenia has its own interests and security problems, which should be ensured despite geopolitical fluctuations, someone's desires or jealousy," Simonyan said. He also added



that Russia should publicly admit that it cannot solve Armenia's security issues.

"They always say they are in favor of someone else being able to solve the issue differently. But the fact is that it is up to them to solve this issue. They should have solved this issue (reopening of the Lachin corridor, the only road linking Nagorno-Karabakh and Armenia). Let's be honest, they are the ones who are to ensure our security and territorial in-

Continued on page 4

## Serge Lavrov: The Trilateral Statement Does Not Provide for the Creation of a Checkpoint in the Lachin Corridor

BAKU — Foreign Minister Sergei Lavrov indicated on Tuesday Russia's opposition to Azerbaijan's desire to set up a checkpoint on the sole road connecting Nagorno-Karabakh to Armenia which was blocked by Baku more than two months ago.

Visiting Baku, Lavrov said traffic through the Lachin corridor must be regulated in strict conformity with a 2020 Armenian-Azerbaijani agreement that placed it under the control of Russian peacekeepers stationed in Karabakh.

Հատորը ճոխացած է բազմաբնոյթ դրուագներով, մասամբ խօսակցական հասարակ հիմքով ու իրեն ժամանակակից ընկերներով, բան մը որ առհասարակ կը պակսի մեր արդի գրականութեան մէջ: Ո՛չ հռետորութիւն եւ ո՛չ փաղաքշանք: Բարեկամութիւնը կը փայլի այս գիրքին մէջ ինչպէս հեղինակը ինք, անստերիւր եւ անշամանդադ, իր ամբողջական իմաստով, արտացոլացնելով բազում հաճելի եւ երբեմն վերապահ ու թափանցիկ երեւոյթներ: Համարձակութիւն կը տրիք ամենուրեք, որքան որ ինք կ'արտօնէ, քաղաքավար իր կեցութեամբով, իր տան երգիքին տակ հիւ-



րասիրելով յայտնի կամ պարզ հայորդիներ, գրագէտներ եւ կամ երիտասարդ ամուրիներ իրենց հասարակ մտահոգութիւններով:

Ճամբորդութիւններ անպակաս են միշտ, յաճախակի վերադարձ Պէյրութ, մասնագիտական կարճժամկէտ այցելութիւններ Նիւ Եորք, եւ վերջապէս Գալիֆորնիա, ուր կը վարէ նաեւ Ֆերահեան Ազգային Վարժարանի տնօրէնութիւնը, գիտաշխատանոցը միշտ կեդրոնացնելով Պոսթոն: Ամերիկածին ու ներգաղթող հայու կնճուտ փոխանցումը մէկէն միւսը միշտ ներկայ է այս հատորին մէջ, իսկական հայու որոնումով: Իսկ երկրորդ գիրքին մէջ լուրջ հարցազրոյցներով որոնց պիտի անդրադառնամ ստորեւ:

Դոկտ. Մարգարեա Մարկոսեան եղած է նաեւ թարգմանիչ հայ հին գրականութեան նմոյշներ թարգմանելով: Բանաստեղծութեանց պարագային ընտրած է ամերիկացի բանաստեղծուհի Տայանա Յովհաննէսեանի տաղանդը որ սակայն յուսախաբ ըրած է զինք այլեւազլ պատճառներով, ինչպէս կը կարդանք առաջին գիրքին մէջ, մասնաւոր երբ Տայանա ինքզինքին վերապահած է թարգմանչական աշխատանքը մոռնալով հայերէն լեզուի հանդէպ իր բոպիկութիւնը, օգտագործելով եւ ուրանալով նոյնիսկ բուն հեղինակին՝ Մարգարեա Մարկոսեանի ներդրումը:

Հատորը ինքնին հաւաքածոյ մըն է հեղինակին տարիներու վրայ տարածուած յօդուածաշարքի մը որոնք լոյս տեսած են իր ժամանակի անուանի ամսագիրներուն մէջ, իւրաքանչիւրը համապատասխան հեղինակաւոր ամսագրի կամ շաբաթաթերթի մէջ լոյս տեսած թուականով եւ աղբիւրներով ճշգրիտ արձանագրուած, ինչպէս «Նայիրի», «Յառաջ», «Սիոն», «Հայրենիք», «Նոր Կեանք», եւ այլ հեղինակաւոր հայ մամուլի հատորներու մէջ՝ արժանանալով թորգոմ Արքեպիսկոպոսի, Անդրանիկ Ծառուկեանի, Վահէ Վահահատանքներուն: Հիւրընկալ եղած են ինք եւ տրիկինը Սեդան, ու բարեկամներ յաճախ հանդիպած են իր «վերնատան» մէջ, ինչպէս ինք կ'որակէ, անշուշտ աւելի հարցեր ստեղծելու քան թէ լուծելու համար: Միշտ գրական մեծ ու փոքր անուններ խօսակցութեան նիւթ դարձած են, Սիւլվա Կապուտիկեան, Անդրանիկ Ծառուկեանն ու Ուիլյամ Սարոյեանը, ինչպէս նաեւ Վահէ Օշական եւ ուրիշներ: Մարգարեա եղած է նաեւ ջերմ եկեղեցասէր ու պատուախնդիր անձ

մը Հայ Եկեղեցոյ նկատմամբ, զգայուն հայ շարականներու եւ արարողութեանց հանդէպ, յիշելով միշտ իր պատանեկան Արմէն անունով ընկերը, այժմ Նորվան Արքեպիսկոպոս Զաքարեան, Ֆրանսահայ թեմի նուիրեալ Առաջնորդը, որուն հետ կիրակի օրեր կ'երթեւեկէին Սուրբ Աստուածածին եկեղեցի որպէս դպիրներ: Նորվան Սրբազան Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ 1982 թուին եպիսկոպոս ձեռնադրուած է:

### Երկրորդ Գրքերը (Կապոյտ)

Աւելի ծաւալուն այս գիրքը կը ցոլացնէ հեղինակին ազգային եւ եկեղեցական բազմադիմի հարցեր՝ յատկացուած «Նիւ Եորքցիներուն»: Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Անթիլիաս առաջին այցելութեան մեծ խանդավառութեանն էր Մարգարեա արձանագրած է ընդարձակ երեք հարցազրոյցներ՝ Գարեգին Բ Կիլիկիոյ Աթոռակից, ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Ամերիկահայ թեմի Առաջնորդ Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, եւ Կիլիկեան թեմի Առաջնորդ Մեսրոպ Աշճեան Արքեպիսկոպոսին հետ: Սկիզբը սակայն իր յարգանքի տուրքը ու հիացումը մատուցած է Կիլիկիոյ նորընտիր Զարեհ Ա Կաթողիկոսին:

Իր խոր յարգանքը յայտնելով Վազգէն Հայրապետին, Մարգարեա Մարկոսեան կը յիշէ թուականներով եւ նպատակներով Նորին Սրբութեան հայրապետական այցելութիւնները Նիւ Եորքի Սուրբ Վարդան Մայր Տաճարի օժման, ինչպէս նաեւ Շիրակի մեծ երկրաշարժին համազգային հանգանակութեան նախագահելու առիթներով: Հայրապետին օրհնաբեր այցելութիւնները եւ Արեւելեան թեմի Առաջնորդ Թորգոմ Արքեպիսկոպոսի Նիւ Եորքեան հանդիպումներուն անձամբ ներկայ գտնուելով, հատորիս հեղինակը կ'արձարծէ բաժանեալ Կիլիկեան թեմի միացման խնդիրը, բարձրօրէն գնահատելով Հայրապետին առած հայրական անփո-

խարինելի քայլը՝ այցելելով անոնց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, բաժանումին վերջ տալու անհրաժեշտութեան սիրոյն:

Նոյն խնդրի առնչութեամբ երկարապատում հարցազրոյց մը վարած է Գարեգին Աթոռակից Հայրապետին հետ, աւելի հռետորական ու ըղձական բնոյթով քան թէ վարչական ու գործնական: Հոն հարցերը ուղիղ դրուած են Դոկտոր Մարգարեաին կողմէ եւ սակայն պատասխանները ուղղուած են ոչ թէ միութեան այլ համագործակցութեան եւ սիրալից յարաբերութեան ճամբով հասնիլ թեմերու միութեան: Գրաւուած թեմերը վերադարձնելու նախապայմանը չկայ, չկայ նաեւ Գարեգին Բ Կիլիկիոյ Կաթողիկոսին էջմիածին յանկարծական մեկնումին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի իր թեկնածութիւնը, երբ նուիրապետական աթոռներու գահակալներ կ'ուխտեն ցկեանս մնալ իրենց բարձր պաշտօններուն վրայ: Կրկնաբանութիւններով ծանրաբեռն սոյն հարցազրոյցը ցոյց կուտայ Գարեգին Հայրապետի թաքուն ըղձանքը հեռանալու Անթիլիասի ճնշումէն, ուր անտարակոյս շնորհաբեր աշխատանք կատարած էր տասնութ տարիներ, եւ բազմելու Գերագոյն Գահին: Փոխանակ խնդրոյն իսկական բնոյթը տեսնելու որ այնքան յայտնի է բոլորին, առաջին հերթին Գարեգին Հայրապետին, անշատ վարչութիւն կը շեփորեն անընդհատ, համագործակցութեան լոգունքով, որ առաջին ու վերջին հաշիւով միութիւնն է:

Հատորը իր ընդարձակ էջերուն մէջ հայկական սփիւռքն է գոր հեղինակը կը գուրդէ իր մանրամասն այլազանութեան մէջ երբ քննելու ըլլանք նիւթերու ցանկը, գանազան անձերու հետ տեսակցելով եւ գործակցելով: Անոնցմէ գլխաւորն է Թեմակալ Առաջնորդ Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան որուն ներքեւ շարք մը յանձնախումբերու մասնակից ըլլալով եւ իր կարեւոր բաժինը բերելով:

St. Gregory Ladies Society  
Presents

# PARADE OF FASHION

## Saturday April 1, 2023

Sheraton Universal Hotel  
333 Universal Hollywood Dr.  
Universal City, CA 91608

Boutique 10:30 AM  
Luncheon & Fashion Show 12:00 PM

For More Information:  
Aida Sethian | (626) 695-8013  
Yn. Talin Petoyan | (626) 616-1535  
stgregoryladiessociety@gmail.com

### Մինասի Առասպելի եւ Դաժան Իրականութեան Արանքում

«Մինաս, դու նկարիչ ես կամօքն Աստօյ, դու կարող ես արդէն նկարել, ինչպէս որ կամենում ես: Քեզ յաջողութիւն եմ մաղթում քո ծանր, բարդութիւններով լի, վայելքը շատ սակաւ, տառապանքները շատ ու շատ, արդար գործի ճանապարհին...»

...Գնացէք Մինաս Աւետիսեանի մոտ: Նրա կտաւներն արեւի եւ լոյսի հիմներ են: Ես ողջունում եմ երիտասարդներին՝ գեղանկարիչ, քանդակագործ, ովքեր աւագներից սովորելով՝ փնտռում են անծանօթ եւ անյայտ ուղիներ, ձգտում են դէպի անիմանալի, չբացայայտուած: Ես ողջունում եմ համարձակներին ու իմքնատիպներին: Մինասը չի վախենում վառ գոյներից: Նա քայլում է դէպի արեւի աշխարհը...»:

ՄԱՐՏԻՈՍ ՍԱՐԵԱՍ



Փետրուարի 23-ին «դէպի արեւը քայլող» նկարչի՝ իր ծննդավայրն իրենով աշխարհին յայտնի դարձրած Մինաս Աւետիսեանի եղերական մահուան օրն էր, արուեստագէտ, ով նախ ազատատենչ իր հոգու խառնարանում երկնեց սեփական գոյները ու յետոյ դրանք նշխարեց կտաւին: Նրա վրձինի կարևորագույնը՝ աշխարհահռչակ մարդիկ են սքանչացել. «Աշխարհի մէջ անոր պէս նկարիչ քիչ կայ, եթէ ըսեմ չկայ՝ հաւատացէք: Ինչ գործովոր է, հայկական է, հին ու բոլորովին նոր: Զարմանալի է...», - գրել է Ուիլիամ Սարոյեանը: Հանձարեղ Երուսաղէմ Գոգարն էլ չի սքոզել իր հիացումը. «Մինասը նկարչական աշխարհում երեւոյթ է, նրա նկարները գրնգուն հնչեղութիւն կ'ունենան Փարիզի նման նկարչութեան արուեստի կեդրոնում՝ արուեստների մայրաքաղաքում...»: Եւս մէկ մեծահամբաւ հայագրի արուեստագէտի՝ Գառգու խօսքով ամփոփենք մեծարման ու գնահատանքի անվերջանալի այս շարքը. «Մինասը շատ ինքնատիպ ու տաղանդաւոր նկարիչ է: Իրեն գոյներուն մէջ հօր բան մը կայ, արտակարգ ուժ մը, որ շատ ժամանակակից է եւ շատ հայկական: Մինասի նկարներուն մեջ ուժեղ կերպով Հայաստանը կը զգամ...»:

Իսկ իմ ձեռքին գուցէ եւ քչերին ծանօթ մի գիրք է՝ Մինաս Աւետիսեանի մտերիմ ընկերոջ՝ գրականագէտ Վաչէ Սաֆարեանի «Ազատն Մինասը. Լենինը Ապրիլն չի, որ նկարեմ» խօսուն վերնագրով: «Նա մէկն էր այն առասպելաժողովներից, որը բարձրացաւ խաբուրտի վրայ, որի վրայ դարեր առաջ բարձրացել էր Զորդանօ Պրուստին, - գրում է հեղինակը: - Մինասը մի հրաշամանուկ էր, որ կանգնած էր հրաժին, հրանուտ արեւի դէմ-գիրմաց, օրէցօր գորաւոր էր դառնում արեւի լոյսով ու կրակով: Կ'աշխատեմ ներկայացնել Մինասից ինձ հասած իմ կեանքի, իմ կենսագրութեան անբաժանելի մասը դարձած պահերը՝ ամենայն անկեղծութեամբ, Մինասին վայել

անկեղծութեամբ ու անմիջականութեամբ: Երանելի է այն մարդը, ով ճանաչել ու հասկացել է Մինասին՝ հայոց գեղարուեստի լեզուն դար երեւոյթներից մէկին, արուեստի մեծ նորոգիչ, նորարար Մինաս Աւետիսեանին: Ես բախտեմ ունեցել տասնամեակներ շարունակ լինել Մինասի առասպելի եւ դաժան իրականութեան արանքում...»:

Վերջիններից լինում փաստագրական լիարժէք հենքով գրուած այս գիրքը՝ նպատակ չունեմ հանգամանօրէն ներկայացնելու այն: Պարզապէս հատուածներ եմ ներկայացնելու, չիրաւի, այն դաժան իրականութիւնից, որում ապրել եւ ստեղծագործել է Մեծն Զաջուռեցին:

Եւ այսպէս՝ խօսքը տանք գրականագէտին. «Վերջինք բազում դէպքերից մէկը. նկարիչների միութեան այդ օրերի նախագահ, ապա նաեւ կուլտուրայի մինիստր Ռ. Պարսամեանը ոտքով հարուածել էր Մինասի նկարին, մի կողմ հրել եւ արհամարհանքով ասել. «Սա ի՞նչ է, սա էլ նկար է, սա ի՞նչ նկարչութիւն է...»: Մինասը, այդ մասին իմանալով, հանգիստ ասաց. «Կարծում էի, թէ նա ախր մարդ է, ախր ուսուցիչն մտածողութիւն ունի: Պարզուեմ է, որ ոտքով, կոշիկով է մտածում: Սովետական ախրուր երկրտանի մարդուն դարձնում է չորքրտանի: Այդպիսին է ամէն մի ախրուկալ՝ հագուստը բացառութեամբ»: Ահա ձեզ Մինասի վերաբերեալ եղած պետական վերաբերմունքի առաջին, խօսուն օրինակներից մէկը:

Վերջինք այդ ամօթալիխայտառակ օրերից եւս մի դէպք՝ շատերից մէկը. 1968 թ. Նոյեմբերին պիտի բացուէր Մինասի առաջին անհատական, ամբողջական ցուցահանդէսը: Նկարիչների միութեան այդ օրերի քարտուղար, պետութեան կարեւոր ներկայացուցիչներ Մ. Սոսոյեանը եւ Ս. Սուրբաբեանը ոտքի էին հանել սոցուալիզմի ողջ աւազանուն՝ հին ու նոր: Օրական մի քանի անգամ մտնում էին նկարիչների միութեան

թեան նախագահ Գաբրիէլ Գիւլ-եանի առանձնասենեակը եւ պահանջում, որ նա արգելի Մինասի ցուցահանդէսը, թող չտայ, որ այն բացուի: Իրենց չունեցած խիղճն ու ազնուութիւնը վաղուց կորցրած այդ մարդիկ՝ ոչ բարով նկարիչ կոչուածները, ասել էին, որ եթէ Մինասի ցուցահանդէսը բացուի, դա խայտառակութիւն կը լինի նկարիչների միութեան եւ առհասարակ նկարչութեան համար: Եթէ նոյնիսկ այդ ցուցահանդէսը բացուի, մէկ է՝ Մինասը տապալուելու է: Ցուցահանդէսը չպիտի բացուի: Լուսահոգի Գիւրջեանը, որը շատ բարեհոգի մարդ էր՝ լաւ նկարիչ լինելով հանդերձ, ասել էր. «Նկարիչ է, ուզում է ցուցահանդէս բացել, ցուցադրուել, մանաւանդ ամէն ինչ պատրաստ է: Ցուցահանդէսը բացենք, եթէ կը տապալուի, թող տապալուի: Այդ մասին թող նա անհանգստանայ: Եթէ շատ էք ուզում, որ Մինասը տապալուի, ուրեմն բացէք, թող տապալուի: Իսկ եթէ չտապալուի, աւելի լաւ»: Սօս հինգ ամիս ձգձգուելուց յետոյ, ցուցահանդէսը բացուեց: Նրանք պահանջել էին, որ այդ դէպքում նկարիչների միութեան շէնքի մուտքին ոչ մի ազդագործչայտարարութիւն չլինի: Բայց քանի որ Մինասը վաղուց էր նուաճել Երեւանը, կատարուեց ճիշտ հակառակը...»

... Լենինի 100-ամեակը պիտի նշուէր 1970 թ. Ապրիլին: Վերջինը շեցնում էին՝ Լենինի 100-ամեակի տօնակատարութիւնը շատ կարեւոր քաղաքական-գաղափարական արշաւ է, որին անպատճառ պիտի մասնակցի Մինասը: Մինասը՝ հանգիստ, անտարբեր «ընկերների» պահանջին՝ ասաց. «Լենինը Ապրիլն էր...»: Պատասխանը ցնցող էր: Մինասի ասածը նոյնն էր, ինչ որ մէկը գնար Մեքքա-Մետինա՝ մահճեականների սրբավայր եւ օրը ցերեկով մահճեականութեան նուիրեալ գաղափարախօսների առջև հայհոյել, վարկաբեկել Սուհասմէտ մարգարէին... Մինասը մերժում է, չէր ընդունում Լենինին՝ մարքսիզմ-լենինիզմի Սուհասմէտ մարգարէին...

Պետական «ընկերները», սարսափած Մինասի պատասխանից (խօսքը Մինասն էր ասել, սակայն սարսափողները լսողներն էին), փորձեցին համոզել, բացատրել, թէ ինչ անկանխատեսելի հետեւանք կարող է ունենալ այդ ամէնը: Անդրդուելի Մինասը, որպէսզի լսելի դառնա «ընկերներին», գայրացած կրկնեց. «Նկարիչը բեռնակիր-համալս չի, որ ինչ գնեն շաշակին, այն էլ շաշակի ու տանի: Չեմ նկարել, չեմ նկարելու: Լենինը Ապրիլն էր, որ նկարեմ...»:

... Ընկերների գնալուց յետոյ Մինասին ասում են. «Այ ծուռ մշցի, տո լաճ տնաւեր, էս ի՞նչ ես անում: Առանց էն էլ քո կարմիր գոյնը դէմ է սրանց կարմիրին, կարմիրների կարմիրին: Քո որդան-կարմիր գոյնի ֆոնի վրայ սրանց կարմիրը սեւանում է, սեւացել է: Յիշիր, թէ ինչպէս էին պետական մտածողութեամբ այրելը ցուլի-կովի նման խրտնում քո կարմիրից, խմբովին չարձակում էին նկարները վրայ: Քո կարմիր գոյնը սրանց անդորրը վաղուց է խախտել: Գիշեր ու զօր քո գոյներն են քննում եւ քեզ մեղադրում օրինախախտութեան մէջ: Լենինից-լենինիզմից ճրագարուելով՝ դու մահափորձ ես անում քո դէմ: Դա առնուազն ինքնասպանութեան փորձ է...»

-Ես իմ հաւատամքին, իմ սկզբունքներին դէմ չեմ գնացել երբեք, չեմ գնալու: Ինչ որ լինելու է, թող լինի,- ասում է պարանոցը սովետական գիլիոտինին պարզածյանձնած հայ նկարիչը:

Այդ ճակատագրական գրոյցից յետոյ սկսեցին ինչ-որ «պատահական-պատահարներ» կատարուել Մինասի հետ...»

...1970 թ. ամառնամուտին էր, Մինասի մօտ եմ գնում: Աշխատում էր: Սովորական հանգիստը չտեսայ: Բարեւոյցներ, հարց ու պատասխանից յետոյ ցոյց է տալիս պատահանի ապակու վրայ գնդակների հետքերը: Ցնցուած եմ: Սառը քրտինքը պատում է մարմինս: Բերանս չի բացում, որ խօսեմ: Դառնացած ասում է. «Ես որ ասում եմ, դու հակափաստեր ես բերում ինձ միութարելու, հանգստացնելու համար...»: Մինչ այդ նա բազմաթիւ անտորագիր նամակ-բացիկներ էր ստանում, որտեղ ամէն կարգի ստորութիւնները վերջաբանում էին Երեւանից՝ Հայաստանից հեռանալու պահանջներով. «Տուն-ընտանիքը հաւաքիր եւ հեռացիր Հայաստանից, հակառակ դէպքում վերջը վատ կը լինի»: Բոլոր կարգի սպառնալիքները սպառուած էին՝ անցել էին գործի, գործնական քայլերի:

Եկաւ եւ Յակոբ Անանիկեանը, որը փորձեց ինչ-որ նրբացուցիչ դէպք յանցանաց գտնել՝ ասելով, որ հիմա այնքան շատ մարդիկ որսորդական հրացաններ ունեն, պատահական կրակոցներ եղած կը լինեն: Յակոբը նոյնպէս այլալուծած, գունատուած էր: Յետոյ ինձ ասաց. «Ապշելու բան է, ընկել են էս մարդու հետեւից, ի՞նչ են ուզում: Իսկպէս որ ընկել են էս մարդու հետեւից, կարծես անոնիմ նամակները քիչ էին: Իսկ այս կրակոցները հաստատու են, որ ընկել են էս մարդու հետեւից...»

...Յաջողը «պատահական-պատահար» 1972 թ. հրդեհն էր, երբ հրոյ ճարակ դարձան հայ արուեստի շատ գլուխ գործոցներ: Հրդեհն սկսուել էր 1972 թ. Յունուարի 1-ի լոյս 2-ի գիշերը՝ լուսադէմին: Յերեկը քաղաքում անմիջապէս տարածուեց այն «կարեւոր» լուրը, որ հրդեհն առաջացել է էլեկտրական սալիկ-պլիտայից: Մինասն անուշադիր է եղել, դուրս գալուց պլիտան չի անջատել, որը եւ դարձել է հրդեհի պատճառը: «Մինասը շատ մոռացկոտ մարդ է», - ասում էին ընկերները: Բայց Մինասը արուեստանոցից դուրս էր եկել 1971 թ. Դեկտեմբերի 28-ին, օրուայ երկրորդ կէսին: Այդ օրը արուեստանոցը մաքրեց մի շատ բարի, աշխատասէր, աւանդապահ մալական կին, յատակին էլ մաստիկա քսեց: Այդ կինը միշտ գալիս եւ մաքրում էր Մինասի արուեստանոցը: Մինասն արուեստանոցը փակեց եւ մէկ ժամ յետոյ, ընտանեօք հանդերձ, մեկնեց Զաջուռ: Սովորութեան համաձայն՝ Նոր տարին մեծամասամբ դիմաւորում էր Զաջուռում, հարագատների շրջանում: Այդ օրերին էլ, այսօր էլ ասում են՝ հաշուէք, խնդրեմ, մօտ հինգ օր պլիտան վառուել է, նոր միայն Յունուարի 2-ի լուսադէմին հրդեհը բռնկուել է: Անհաւատալի, անհասկանալի հիմնաւորում է սա: Խէլքի մօտ բան չէր, եւ շատ էր կասկածելի... Մինասի արուեստանոցի մոխիրի մէջ նախ-բենգիլի հետքեր էին յայտնաբերուել: Այդ մասին, իհարկէ, արձանագրութեան



# Աշխատանքը Մայրն է Բոլոր Յաջողութիւնների

Ռ. ԿՈՐԻԻՆ

Փետրուարեան 2023-ի գովաշունչ օր, արփին լուրթ երկնակամարում իր ողջ հրազունդով գենիթին չհասած ճառագում էր գաղջ, ոսկեթել շողերը տարածելով քաղաքի վրայ: Այսպիսի մի գեղեցիկ օր, ինքնաշարժիս դեկը ուղղեցի դէպի Նորիկի արհեստանոցը, նպատակադրել էի ըստ դրական տեղեկութիւններիս մի գրութեամբ հանրութեան ներկայացնել մեր յաջողակ արհեստաւորներից յանձինս Նորիկին: Առանց նախապէս ժամադրութեան իմ մտադրանքս ի կատար ածելու առումով ներս մտայ Նորիկի արհեստանոցը: Գրասենեակում մարդ չկար, քայլերս ուղղեցի դէպի աշխատանքի սրահը, աշխատանքի եռ ու գեռ, Նորիկին էի փնտռում, չտեսայ, ուստի կանչելով ուղեցի տեղը ճշտել, ձայն բարձրացաւ թէ՛-պրն. Ռուբէն այստեղ եմ, ներկարարի փակ տաղաւարում, տեսայ վարպետը գործաւորի հետ մեքենայի մարմնի թիթեղիայ մի մասը կախում էին առաստաղի կեռ գամերից ներկելու համար, այնուհետեւ գործաւորը գործի անցաւ:

Տաղաւարից դուրս սրահում քայլել սկսեցի, ամէն ինչ կարգ ու կանոնով դասաւորուած, տասի չափ մեքենաներ նորոգութեան կարիք: Անցայ գրասենեակ, Նորիկից մի քանի կենսագրական տեղեկութիւններ ստանալով թողեցի արհեստանոցը աշխատանքի եռուն անելիքներին չխանգարելու համար:

Արդարեւ երբ հայեացք ես նետում քո շրջապատին, տեսնում ես տարբեր տեղերում մեծաթիւ հայ արհեստաւորներ կան, շատ-շատերը միջին արեւելեան երկրներից եւ Հայաստանից եկած, խոնարհ եւ համեստ հայ արհեստաւորներ, օրինաւոր քաղաքացիներ, որոնք օրն ի բուն աշխատանքով տքնում են իրենց վստահած յաճախորդներին գոհացնելու, նաեւ իրենց ընտանեկան գոյապրուստի եւ զաւակների ուսման ծախսերի համար մտածելու եւ հոգ տանելու առումով: Բացի գործի դժուարութիւնները, նրանց սրտումն է նաեւ հայրենիքը, նրա յաջողութիւններով ուրախ, ձախողութիւններով մտահոգ եւ չեն գլանում որեւէ միջոցով օգտակար լինել:

Ահա այս հայալայել ու մարդավայել հոգեվիճակը գգալով եւ նրանց վարքը տեսնելով գոհունակ սրտով ցանկանում ես գրիչ վերցնել եւ մէկիկ-մէկիկ նրանց մասին գրել եւ մեծարանքի արժանացնել, քանի որ մեր սփիւռքեան կեանքում նրանք իրենց արարքով, ձեռներէցութեամբ, վերաբերմունքով, վստահելութեամբ եւ ճշմարտախօսութեամբ հայի պատիւը բարձր են պահում իրենց ապրած երկրներում:

Իմ ճանաչողութիւնը Նորիկի արհեստի եւ հոգեբարոյական արժանիքների մասին վաղեմի անցեալ ունի Լոս Անճելոս-կլենտէլում,

Նորիկը ծնունդով իրանահայ է, ծնունդ է 1967 թ. արհեստաւորի ընտանիքում, ծնող-

ներ՝ Յակոբ եւ Սիլվարդ Նաւասարդեան ազգանունով, երեք եղբայրների կրտսերն է, երեքն էլ ընտանիքաւոր արհեստով են աշխատում: Նորիկը հայկական դպրոց է յաճախել, սակայն անաւարտ տասնվեց տարեկանից արհեստի է հետեւել մեքենայի տեխնիկ աշխատելով (ներկող եւ հարթեցնող, դգող-փչող, body shop, Auto collision): Տարիների բովում այդ արհեստում հմտացել դարձել է վարպետ: Նորիկը ամուսնանում է 1990 թ. Ռիմայի հետ բախտաւորուելով երկու զաւակներով՝ Ադենա եւ Ադէ անուններով, արդէն թոռնատէր է:

Իրանի յեղափոխութեան սկզբնական տարիներում շփոթ վիճակը եւ անգործութիւնը պատճառ դարձաւ երիտասարդներ արտագաղթէն դէպի արեւմտեան երկրներ: Վարպետ Նորիկը 1999-ին ընտանիքով հաստատուում է Լոս Անճելոս-կլենտէլում: Նա արդէն իսկ կայացած վարպետ էր իր արհեստում՝ ծաղկած ծառ: Աշխատանքի է անցնում վարպետ Ստիվի արհեստանոցում, ապա տարիներ յետոյ իր սեփական արհեստանոցն է հիմնադրում իր հետեւողական աշխատանքի շնորհիւ, նաեւ բարեկեցիկ վիճակ ընտանիքի համար: Ադէն, Նորիկի որդին, հօր արհեստին է հետեւում ունենալով իր սեփական արհեստանոցը գործաւորներ աշխատեցնելով:

Նորիկը հայկական հոգեբանութեամբ հայրենասէր եւ ազգասէր մի անձնաւորութիւն ընկերներով կեանքի են կոչում՝ «Սասուն» անունով բարեսիրական եւ մշակութային միութիւն, շուրջ տաս տարի իր մասնակցութիւնն ու ծառայութիւնն է բերում: Միութիւնները շատ կարեւոր են մեր սփիւռքեան գաղթօջախներում, անհրաժեշտ է դպրոցական տարիքից երեխաներին ընդգրկել եւ մեր մշակութային արժէքներով դաստիարակել, հրամայական պահանջ է այս ցանկութիւնը, իւրաքանչիւր հայ ընտանիք նախանձախնդիր պիտի լինի իր զաւակների հայեցի դաստիարակութեամբ:

Նկատելով արուեստի եւ այլ բնագաւառների երախտաւոր անձիքը գնահատուած եւ պարգեւաւորուած են, ցանկալի է առաջատար եւ ստեղծագործող ու բարեհամբաւ արհեստաւորներն եւս պաշտօնապէս ազգային մարմինների կողմից գնահատուեն որպէս խրախուսանք այլոց:

Իմ կարծիքով արհեստաւորները իրենք թող այս ուղութեամբ մտածեն, միութիւն կեանքի կոչեն, բոլորին հաւաքել մէկ հովանոցի տակ, կարիք է, միութիւնը ուժ է եւ զօրութիւն: Իրանում հայ արհեստաւորները առաջատար են եղել այս առաքելութեան իրագործման մէջ, երկար տարիներ է այդ միութիւնը օգտակար աշխատանք է տանում:

Համայն արժանաւոր արհեստաւորներին տարբեր գաղթօջախներում ասում եմ վարձքներդ ի կատար յարգանքի անկեղծ հաւաստիքներով:

# Շնորհաւոր Տարեդարձ, Մաեստրո Աղաբաբեան

Մշակոյթի պատմութիւնն ուսումնասիրելիս յաճախ է արձանագրում այն յայտնի ճշմարտութիւնը, որ Մեծերը ծնունդ են մայրաքաղաքից հեռու՝ շրջաններում, այնտեղ, ուր բնութիւնն է կերտում անհատին՝ օժտելով վառ ու իւրապատուկ գոյներով: Նրանք բնաշխարհից վերցնում են այն, ինչ որ սահմանուած է լինում ի վերուստ: Այս է պատճառը, որ տաղանդաւոր մարդիկ նկատում, զգում եւ արտայայտում են այն, ինչ որ տրուած է պարզ մահկանացուներին, սակայն այդ ստեղծած աստուածատուր արուեստը զալիս է զարդարելու, հարստացնելու եւ ներդաշնակելու հասարակութեան կեանքը:

Բացարձակ ճշմարտութիւն է, որ ժամանակի առաջ ամէն ինչ անցողիկ է: Մնայունը հոգու ու մտքի արգասիքն է, արուեստագէտի, մտաւորականի երկունքի արտայայտութիւնը: Այդ պատճառով է, որ երբեմն ժամանակը մեզ թելադրում է, որ նշանաւոր մարդկանց անրադառնանք եւ ըստ արժանուցն գնահատենք իրենց կենդանութեան օրօք, որը կը լինի ոչ միայն ստեղծած ժառանգութեան արդարացի արժեւորում, այլեւ իսթան, իւրօրինակ մղիչ ուժ նոր ստեղծագործական շրջափուլում:

Անթաքոյց իրականութիւն է, որ Ղարաքիլիսա-կիրովական-Վանաձորն իր հոգեմտաւոր պատմութեան մէջ ունի ամրագրած բազում պանծալի անուններ, ովքեր իրենց արարմամբ վառ են պահել քաղաքի մշակութային ու հոգեւոր գարկերակը: «Մուսաների ծառաների» անուանացանկում է արդէն Գագիկ Աղաբաբեանի անունը, որը 2023թ.-ի Փետրուարի 20-ին բոլորում է իր ծննդեան 65-ամեակը:

Մաեստրոյի ստեղծագործութիւնը, արուեստի, մշակոյթի գործիչների մասին նկարահանուած ֆիլմերը, հրատարակած գրքերը հոգեւոր արժէքների մի ամբողջ շտեմարան են: Նրա անունը քաղաքի մշակոյթի պատմութեան մէջ արդէն իսկ արձանագրուած է ոսկէ տառերով: Լոռիում չկայ արուեստի մի ոլորտ, ուր Գագիկ Աղաբաբեանը բերած շինի իր մնալուն աւանդը: Նրա աշխատանքային կենսագրութիւնը կապուած է ծննդավայրի մշակութային կեանքի հետ, ուր երեւան է եկել նրա բնատուր կազմակերպչական ու ստեղծագործական տաղանդը: Ստեղծել եւ ղեկավարել է բազմաթիւ երաժշտական կոլեկտիւններ: Հիմք է դրել բազում՝ արդէն աւանդոյթ դարձած միջոցառումների: Երկար տարիներ եղել է Վանաձորի քաղաքապետարանի կրթութեան ու մշակոյթի բաժնի պետը: Այսօր էլ իր արդիւնաշատ ծառայութիւնն է բե-



րում Վանաձորի թիւ 1-ին երաժշտական դպրոցում՝ որպէս տնօրէն: Հարկ է նշել որ Մաեստրոյի ջանքերով է հիմնադրուել Վանաձորի «Երգի թատրոն-ստուդիան», որը ղեկավարում է մինչ օրս:

Գրել է ներկայացումների համար բազմաթիւ երաժշտութիւններ: Թողարկել է «Քեզ, իմ Վանաձոր» եւ «Սիրոյ քաղաք» երաժշտական ալբոմները, տպագրել բազմաթիւ ժողովածուներ, հրատարակել «Ղարաքիլիսա-կիրովական-Վանաձոր. Մշակոյթի տարեգրութիւն» եւ «Մուսաների ծառաները» գրքերը, որոնք ունեն մշակութային հանրագիտարանի արժէք, «Երգի թեւով, պարի հոգով» հատորը: Մաեստրոյի շնորհալի գրչին են պատկանում նաեւ «Իմպրեսիոններ» բանաստեղծական ժողովածուն:

Անհնար է մէկ գրութեամբ անրադառնալ Գագիկ Աղաբաբեանի ովկիանոսածաւալ ստեղծագործական ժառանգութեանը եւ գործունէութեանը, որն այսօր էլ շարունակում է իր վերելքը՝ ազնուացնելով մարդկանց հոգիներն ու սրտերը: Նրա ծառայութեան լավագոյն գնահատութիւնը մեծ յարգանքն ու սէրն է, որ Մաեստրոն վայելում է իր հարազատ Լոռիում:

Մշտապէս խստաբարոյ, պահանջկոտ ու սկզբունքային Գագիկ Աղաբաբեանի կրճքի տակ թաքնուած է ուժմանտիկ ստեղծագործողի, անդադրում կամքով օժտուած, պրպտացող մտաւորականի մեծ սիրտը, որը պատրաստ է մշտապէս գոհուել յանուն հայրենիքի, յանուն մշակոյթի, յանուն ընկերների եւ, ի հարկէ, իր գեղեցիկ ընտանիքի:

Շնորհաւոր տարեդարձ, սիրելի Մաեստրո, թո՛ղ Ձեր գրիչը շարունակի լինել բեղուն, իսկ Ձեր հոգեյոյգ գրուածքները շարունակեն ապրել մեր շուրթերի վրայ՝ առաջնորդելով դէպի բարին ու կատարեալը:

Յովհաննէս սարկաւազ Գումրույեան

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
**(200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՆՆԵՐ՝**  
**ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

### Վարդանանց Տօնակատարութիւն Հայ Քոյրերու Վարժարանին Մէջ



Չորեքշաբթի, 15 Փետրուար 2023-ին, Գալիֆորնիոյ Հայ Քոյրերու Վարժարանի աշակերտները նշեցին վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց իրենց կեանքը զոհաբերած՝ Վարդանանց զօրավարաց տօնը:

Ամերիկայի, Հայաստանի եւ վարժարանիս քայլերգներու ունկնդրութեանն ետք, գեղարուեստական յայտագրի բացումը կատարեցին 4-րդ եւ 5-րդ կարգի աշակերտները՝ «Նորահրաշ» երգով: Ապա բացման խօսքը կատարեց վարժարանիս հայոց լեզուի ուսուցչուհիներէն Տիկ. Մարօ Գուլումեան՝ ըսելով, որ պատմութեան մէջ կան թուակականներ, որոնք ճակատագրական նշանակութիւն ունեցած են ազգի մը գոյատեւման եւ անոնցմէ է 451 թուականը՝ Վարդանանց պատերազմը յանուն քրիստոնէութեան, յանուն գոյատեւումի վճռականութեան եւ հաւատքի զօրութեան: Տիկ. Գուլումեան ներկայացուց Աւարայրի ճակատամարտին պատմականը, որ հակառակ հայերու կրած ռազմա-

կանը անգլերէնով: Այնուհետեւ 4-րդ եւ 5-րդ դասարաններու աշակերտները բեմականացուցին «Վարդանանց ճակատամարտը», որուն յաջորդեց 6-րդ դասարանի ասմունքը՝ «Տիկնայք Փափկասունը»:

Օրուան պատգամը փոխանցեց վարժարանի փոխտնօրէնուհի Տիկ. Ռիթա Պոյաճեան: Ան ըսաւ, որ Վարդանանք նահատակուեցան, որպէսզի մենք մնանք տէրը մեր լեզուին, կրօնքին եւ մեր հայրենիքին: Ան նշեց, որ Աւարայրի ճակատամարտէն յետոյ դարերու ընթացքին նոյն սրբութիւնները պահելու համար նոյն պատերազմը մղած է հայ ժողովուրդը, ըլլալ այդ 1915-ի ցեղասպանութեան թէ Սարդարապատի ճակատամարտին ընթացքին, հասնելով մինչեւ արցախեան գոյամարտը: Տիկ. Պոյաճեան զգուշացուց, որ անկախ անկէ որ թշնամին ի գոլը կը փորձէ բռնի ուժով մեզի պարտադրել զիջիլ մեր հայրենիքէն, մեր ինքնութենէն, մեր լեզուէն ու մշակոյթէն, բայց թոյլ չտանք, որ մենք մեր



կան պարտութեան, «հայ ժողովուրդը կրցաւ խաչը բարձրացնել ու պատմութեան տալ հաւատքի անկորնչելի յաղթանակը» ըսաւ ան եւ շեշտեց մեր գլխաւոր պարտականութիւնը՝ պահել մեր հայրենիքը, դաստիարակել մեր մատղաշ սերունդը հայօրէն, սորվեցնել անոնց Վարդանանցու հաւատքը: Ան նաեւ կոչ ուղղեց սիրելու մեր լեզուն, մեր եկեղեցին, մեր դպրոցը, մեր ազգը, մեր փառապանծ հայրենիքը:

Մանկապարտէզի աշակերտները ասմունքեցին «Քաջ Վարդան»ը, իսկ Ա. կարգի աշակերտները երգեցին նոյն խորագրով երգ: 8-րդ դասարանի աշակերտները ներկայացուցին «Խորհուրդ Վարդանանց»ը, իսկ 5-րդ դասարանը՝ Վարդանանցի համառօտ պատմա-

ձեւով զիջինք մեր այս արժանիքներէն, մեր սրբութիւններէն: Ապա ան խօսքը աշակերտներուն ուղղելով ըսաւ. «Դուք եթէ հայրենի խօսիք, կարդաք ու գրէք, մենք կը շարունակենք մեր յաղթանակը, եթէ դուք պահէք մեր քրիստոնէական կրօնքը, դուք շարունակէք տէր կանգնիլ մեր հայրենիքին, մենք կը շարունակենք մեր յաղթանակը»: Վարժարանի փոխտնօրէնուհին նաեւ շնորհակալութիւն յայտնեց յայտագիրը պատրաստած ուսուցչուհիներուն, իրենց կատարած գնահատելի աշխատանքին համար:

4-րդ եւ 5-րդ կարգի աշակերտները երգեցին «Հիմի էլ Լուսն» եւ «Մենք Քաջ Վարդանի Զաւակներն ենք» երգերը: Նշենք նաեւ, որ յայտագրի ընթացքին 7-րդ կարգի

### Սր. Գրիգոր Լուսաւորիչ Շաբաթօրեայ Վարժարանը Նշեց Վարդանանց Տօնը



25 Փետրուար 2023, Շաբաթօր Հարաւային Քալիֆորնիոյ Փաստենա քաղաքի Սր. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարանը նշեց Վարդանանց տօնը:

Հարաւային Քալիֆորնիոյ Փաստենա հայահոծ քաղաքի շաբաթօրեայ վարժարանի յատուկ եւ յիշատակելի օրն էր 25 Փետրուար 2023, Շաբաթօրը: Կէսօրին, բազմաթիւ ծնողներ, մեծ հայրեր եւ մեծ մայրեր, ինչպէս նաեւ այլ քաղաքներէ ժամանած հիւրեր եւ համակիրներ իրենց ջերմ բարեւներով ու գրողներով սկսան լեցնել եռագոյնով եւ Վարդանանց ճակատամարտի նուիրուած նկարներով զարդարուած Տունայեանց սրահը՝ իրենց սիրելի փոքրիկ զաւակները կամ թոռները բեմի վրայ տեսնելու ուրախութիւնը եւ հպարտութիւնը վայելելու համար:

3 տարեկան «Վարդանը» Ռազմաշունչ ճշգրտութեամբ եւ համաչափ շարժումներով նախ բեմ բարձրացան մանկապարտէզի սանիկները: Անոնք կը հետեւին իրենց ուսուցչուհի Անի Մարսէլեանի եւ օգնականուհի էլլեն Վարդանեանի աջ ու ձախ քայլերը: Փոքրիկներու տողանցքը սրահի մէջ ստեղծեց հիացումի պահեր: Անոնք ժիր ձայնով արտասանեցին Քաջ Վարդանի նուիրուած ոտանաւորներ ու երգեցին Վարդանանց հերոսներու նուիրուած երգ մը: 3 տարեկան Հայկը հպարտ էր, որ ինքը, օրուան հերոսի՝ Քաջ Վարդանի մարմնացումն էր:

«Քաջ Վարդանանց տօնն է այսօր»

Յաջորդաբար բեմ եկան Բ., Գ. եւ աւագ դասարաններու աշակերտները: Անոնք, ուսուցչուհի Մարալ Դաւիթեանի առաջնորդութեամբ արտասանեցին Վարդանանց հերոսներուն եւ ոգին նուիր-

ուած բանաստեղծութիւններ, ինչպէս՝ «Քաջ Վարդանանց տօնն է այսօր» եւ «Աւարայրի դաշտը ներկեց արիւնդ»:

Մահը մեզի չեկաւ, մենք մահուան գացինք

Ձեռնարկին պատգամախօսն էր դպրոցի ուսուցչուհիներէն Ազնիւ Սէրայտարեանը: Ան Վարդանանց ճակատամարտի նուիրուած տասնեակ մը սահիկներու ցուցադրութեան ընթացքով փոխանակեց 451-ի խորհուրդը եւ նշանակութիւնը: Ան աշակերտներուն համար պարզ ու համեստ լեզուով մը մեկնաբանեց «Վարդանանց - Ազգային գոյատեւում - Ինքնութիւն» անթակտելի կապը: Մէկ այլ սահիկի վրայ յայտնուած «Մահ ո՛չ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է» խօսքը բացատրեց հետեւեալ ձեւով. «Մահը այդ հերոսներուն չեկաւ, անոնք գացին մահուան: Անմահութիւն է մէկի գոհողութիւնը բոլոր համար, գիտակցելով, թէ մահով պիտի պսակուի սրբազան որոշումը՝ ստանալ վերջին հաղորդութիւնը, պայքարիլ ու նահատակուիլ»:

«Թող միշտ պանծայ Հայաստան»

Յայտագրի աւարտին դպրոցի տնօրէն Նորայր Տատուրեանը իրենց ոգեշունչ կատարումներուն համար բոլոր աշակերտները շնորհաւորեց: Ան նաեւ ծնողներուն շնորհակալութիւն յայտնեց հայեցի դաստիարակութեան հանդէպ իրենց ցուցաբերած անսակարկ հաւատարմութեան համար: Ապա ամբողջ օրահը, տնօրէնի հրաւերով միաբերան երգեց Տէրունական աղօթքը, Հայաստանի քայլերգը (օրհներգը) եւ «Մենք մանուկներ հայոց ազգի» երգը:

Դպրոցական հաղորդագրութիւն

աշակերտներ մերթ ընդ մերթ բեմ բարձրանալով լողունգներ հնչեցուցին հայապահպանման ու միասնականութեան մասին:

Աւարտին, գերյարգելի Հայր Բարսեղ Մ. Վրդ. Պաղտասարեան խօսք առնելով ըսաւ. «Վարդանը մեռաւ, որպէսզի ազատութեամբ աղօթենք: Այժմ ես պիտի խնդրեմ ձեզմէ, որ ինչպէս այստեղ ձեր երգերուն մէջ ձեր ոտքը գետին զարկիք, նոյնպէս ձեր տան մէջ զարնէք ձեր ոտքերը, որպէսզի ձեր

ծնողները ձեզի եկեղեցի տանին ու աղօթէք»: Վարդապետը շեշտեց, որ դպրոցը իր առաքելութիւնը կը կատարէ, բայց ծնողներն ալ ունին իրենց բաժին պարտականութիւնը՝ իրենց զաւակներուն հոգեւոր կեանքը զարգացնելու առումով, որովհետեւ մեր պարտքն է ըլլալ ե՛ւ հայ, ե՛ւ քրիստոնէացի միաժամանակ, որովհետեւ անոնցմէ մէկուն չգոյութիւնը մեզ թերի կը դարձնէ: Ապա ան «Պահպանիչ»ով փակեց հանդիսութիւնը:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթաթերթին**

ՄԱՐԱԶԴ



ԵՓՐԵՄ ՊԱՂՊՈՒՏԱՐԵԱՆ (1934-2023)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր եւ հարազատին՝ ԵՓՐԵՄ ՊԱՂՊՈՒՏԱՐԵԱՆԻ մահը որ պատահեցաւ 16 փետրուար 2023ին, յետ կարճատեւ հիւանդութեան:
Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 7 Մարտ, 2023ին առաւօտեան ժամը 9:30ին Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, ապա թաղումը Կլենտէյլի Forest Lawn գերեզմանատան մէջ 1712 South Glendale Avenue, Glendale, CA 91205:
Սգակիրներ՝ Այրին Տիկ. Վարսենիկ Պաղպուտարեան Դուստրերը՝ Լենա եւ Գէորգ Գորթուզեան եւ զաւակները Արեն եւ Ալէք Թամար եւ Գինկ Պաքըթ եւ զաւակը Ասթըն Եղբայրները Նուպար եւ Մարօ Պաղպուտարեան եւ զաւակները Միսակ եւ Մովակ (Դամասկոս) Գարուն իր ընտանիքով (Հոլանտա) Ստեփան եւ Վերա Պաղպուտարեան եւ զաւակները Արեգ եւ Լոի իրենց ընտանիքներով Ժիրայր եւ Սեդա Պաղպուտարեան եւ զաւակները ՍԵՆԱԿ եւ Դալար իրենց ընտանիքներով Քենին՝ Մարից Զաղացականեան եւ դուստրը Թալին եւ Հուրի իրենց ընտանիքներով:
Եւ համայն Պաղպուտարեան, Գորթոշեան, Տէր Գորհանէսեան, Հինտոյեան, Յակոբեան, Պապիկեան, Գրիգորեան, Էքիզեան, Մեսրոպեան, Զէպեան, Ղեւոնդեան, Սիմոնեան, Քէշիշեան, Այվազեան, Շաղաթեան, Եսայեան, Սասունեան, Ռուպիօ, Զաղացականեան, Ուրիշեան, Էլիաս հարազատներն ու բարեկամները:
Թաղման արարողութեան հետք հոգեճաշ պիտի մատուցուի Carousel ճաշարանին մէջ 304 North Brand Blvd. Glendale, CA 91203:
Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ պիտի յատկացուին Լիբանանի հայկական վարժարաններուն Ազգային Առաջնորդարանի միջոցաւ:
Check payable to Western prelacy 6252 Honolulu Avenue, La Crescenta, CA 91214£

Մինասի Առասպելի

Շարունակուած էջ 16-էն

մէջ չի նշուել... Մինասի կեանքի երկրային ժամանակը մօտենում էր աւարտին: Երրորդ եւ վերջին «պատահական պատահարը» Մինասի հետ տեղի ունեցաւ 1975 թ. ֆետրուարի 16-ին: Վթարից երկու օր յետոյ եղաջ Մինասի մօտ՝ հիւանդանոցում: Վիճակը շատ ծանր էր, անյոյս: «Մինաս, էս ի՞նչ եղաւ, էս ո՞ւր եղաւ...»: Մեղմ, մերձիմաս ժպտաց. «Ինչ որ պիտի լինէր, եղաւ... Վարորդը, երբ մեքենայով բարձրացաւ մայթի վրայ եւ հարուածեց ինձ, ես ընկայ: Ինձ համար մեծագոյն վիրաւորանք էր ընկած վիճակը: Երբեք չէի ընկել: Մի կերպ բարձրացայ, մօտենալով երկու ձեռքով յենուեցի դրան կողքի լուսամուտի գոգին: Այդ ժամանակ մեքենան նորից հարուածեց ինձ, իսկ երրորդ անգամ սեղմեց պատին, որպէսզի ճզմի ինձ...»: Այդ մասին ինձ ասողը Մինասն էր, իրաւաբանական տերմինով ասած՝ գործով, գործի առաջին-հիմնական վկան՝ տուժողը: Իսկ Մինասի ասածին չհաւատալը առնուազն սրբապղ-

ծուծիւն կը լինէր: Մարդ, որն իր ողջ կեանքի ընթացքում ոչ մի սուտ բան չէր խօսել: Մինասի հետ զրոյցից յետոյ, որը, աւաղ, ի դժբախտութիւն ինձ եւ մեզ, վերջինը եղաւ, ինձ համար հարց ու հարցական չմնաց: Ամէն ինչ պարզ էր ու մեկին՝ կատարուած էր բացայայտ, մտադրուած սպանութիւն: Մարտի կէսերին էր, գնում եմ Գիտութիւնների ակադեմիայի հին շէնքի՝ Աբովեան փողոցի վրայ գտնուող գրադարան: Մայթն անցայ, մօտեցայ այդ շէնքի (այդ տարիներին Միսանիկեանի շրջագործկոմի) մուտքի աջ կողմի լուսամուտին: Երկար ժամանակ Մինասի արեան հետքերը կային այդ պատի վրայ: Համակ տխրութեամբ նայում էի... Ինձ մօտեցաւ 50-ին մօտ մի բոլորովին անծանօթ մարդ: Առանց ներկայանալու՝ ասաց. «Ես ներկայ եմ եղել այդ վթարի պահին»: Ի գարմանս ինձ՝ նա բառացիօրէն ասաց այն, ինչ Մինասն էր ասել հիւանդանոցում, բառ առ բառ. «Մեքենան Սայաթ-Նովայի փողոցից թեքուեց աջ՝ Տէրեան փողոցով ներքեւ գնալու, բայց՝ զարմանալի կերպով ուղիղ քշեց

ԵՓՐԵՄ ՊԱՂՊՈՒՏԱՐԵԱՆ

Հանգուցեալ Եփրեմ Պաղպուտարեան ծնած է Հաճընցի ընտանիքի մէջ, նախնական ուսումը ստացած է Դամասկոսի Սահակեան վարժարանէն, փոքր տարիքէն եղած է Հ.Մ.Մ.ի սկաուտ: 15 տարեկան պատանի չբաւորութեան պատճառով ինքզինք նետած է գործի ասպարէզ: 1966 թուականին տեղափոխուած է Լիբանան եւ հիմնած «Carosserie Yebco» ընկերութիւնը: Լիբանանի քաղաքացիական պատերազմի պատճառաւ ընտանեօք կը տեղափոխուին Միացեալ Նահանգներ, կ'անդամակցի Հաճնոյ Հայրենակցական Միութեան 2002 թուականէն մինչեւ 2015 թուական: Կը վարէ փոխ ատենապետի ապա ատենապետի պաշտօնը եւ պարտականութեան գիտակից մարդ յաճախ կը ճամբորդէ Արժանթին մասնակցելու ժողովներու, իսկ Հայաստան ոգեկոչելու անմեռ յիշատակը Հաճնոյ Հերոսամարտի նահատակներուն եւ կարիքը հոգալու Նոր Հաճըն քաղաքի Մեծն Մուրատ թիւ 4 միջնակարգ դպրոցին: Երեւանի մէջ կ'այցելէ որբանոցներ եւ գրեհական պիտոյքներ կը հայթայթէ որբերուն: 2008 թուականին Հոկտեմբեր 10-ին կը մեկնի Հայաստան մասնակցելու Նոր Հաճըն քաղաքի հիմնադրութեան 50-ամեակը տօնելու Գալիֆորնիայի Հաճնոյ Հայրենակցական Միութեան ատենապետի ճանգամանքով Էլոյթ կ'ունենայ: 2010 թուականին Մեծն Մուրատ անուան թիւ 4 միջնակարգ դպրոցի տնօրէնուհի Տիկ. Հայկանուշ Պետրոսեան կը տեղեկացնէ որ ապագայի դպրոցի նախադպրոցական տարիքի երեխաներուն կրթու-

թեան հարցերը լուծելու նպատակով որոշած են բանալ մանկապարտէզ մը որը հնարաւորութիւն կու տայ դպրոցը ապահովել աշակերտներով եւ գայն կոչել «Վարսենիկ» իր տիկնոջ անունով գոր կը վաւերացուի կրթութեան նախարարութեան կողմէ: Արդ հանգուցեալը բոլոր հնարաւորութիւնները չի խնայեր իր անձնական լուծանքով կահաւորելու եւ նեցուկ կանգնելու այս դպրոցի բարգաւաճման: Կը նորոգէ սենեակ մը եւ կ'ընդարձակէ խոհանոցը որպէսզի կառավարութեան տուած նպաստով ճաշ հայթայթուի աշակերտներուն եւ կ'արժանանայ «պատուոյ գիրի» որպէս դպրոցի բարերար: 2017 թուականին ընդառաջելով նոր Հաճըն քաղաքի քաղաքապետի անակնկալ հրահրին կը մեկնի Երեւան ներկայ ըլլալու համար Նոր Հաճըն քաղաքի նորակառուց Ս. Ամենափրկիչ եկեղեցոյ օծման արարողութեան եւ անոր յաջորդող մեծ ընդունելութեան այս առիթով հանդիպումներ կ'ունենայ հաճընցի նախարարներու հետ: Հանգուցեալը Եփրեմ Պաղպուտարեան դիւրին կեանք ունեցած չէ, բայց բացառիկ կեանք այն իմաստով որ իր հաւատացած արժէքներուն համապատասխան կեանք ապրած է: Կեանքի պայմաններու բերումով չէր կրցած ուսում ստանալ, բայց շատ աւելի հետաքրքրութիւն ունէր եւ խելացի էր քան վկայական ստացած բազմաթիւ մարդիկներէ, վստահելի, հաւատարիմ, օգտաշատ եւ անշահխնդիր: Ահա նկարագարի այս գիծերն էն որոնք կը կազմէին իր արժէքային համակարգը:

դէպի ձախ մայթ, որի վրայ բարձրացել էր բերետը գլխին մի բարձրահասակ տղամարդ: Յետոյ իմացայ, թէ ով է եղել այդ մարդը: Մեքենան մեծ արագութեամբ բարձրացաւ մայթի վրայ ու հարուածեց այդ մարդուն: Նա մի կերպ ընկած տեղից բարձրացաւ, յենուեց պատին: Մեքենան նորից հարուածեց, իսկ երրորդ անգամ սեղմեց պատին: Այս ամէնը շատ էր տարօրինակ: Ես 20 տարուց աւելի աւտոմեքենայ եմ վարել, ունեմ սեփական մեքենայ: Նման դէպքի ականատես էի լինում առաջին անգամ: Արտաւոց դէպք էր: Այդպիսի բան կարող է լինել կամ յատուկ դիտաւորութեան, կամ շատ հարբածութեան դէպքում: Երկրորդը բացառուում է: Այդ զգացի, երբ վարորդին հանում էին մեքենայից: Վարորդին ոչ մի բան չէր պատահել, ոչ մի վնասուածք չէր ստացել: Նա ինչ-որ շարժումներ էր անում, խօսում էր անկապ, անհասկանալի:

Ես հասկացայ, որ վարորդը դերասանութիւն է անում, յանձնարարուած դեր է խաղում: Այդ ամէնը շատ էր ակնյայտ: Իմ անունը Յակոբ է, ազգանունս՝ Վարազեան», - ասաց ու հեռացաւ...»: Ահա այսպէս, ազգանուէր ընթերցող: Խորհուրդս է՝ կարդալ Վաչէ Սաֆարեանի գիրքն ամբողջութեամբ, որի էջերում Մինաս Աւետիսեանի ողբերգական կերպարն ու շնչառութիւնն է... ՆԵՐԿԱՅԱՅՐԵՑ ՅԱԿՈՒ ՍՐԱՊԵԱՆԸ 3. Գ. Իսկ այրուած գլուխգործոցները 300-մ էին, որից 100-ից աւելին՝ աւարտուն, այդ թւում՝ նաեւ Փարիզում կազմակերպուելիք ցուցահանդէսի համար առանձնացուած աշխատանքները: Նաեւ՝ նկարչի անձնական արխիւը: Յետագայում մի քանի կտոււ ոչնչացել է Պէյրուսի ցուցահանդէսում քաղաքի ռմբակոծութեան ժամանակ:

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services
From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...
Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

### Հայաստան Նուաճեց Ոսկի, Արծաթ Եւ Պրոնզ Մետալներ՝ Մարմնամարզութեան Աշխարհի Գաւաթի Խաղերուն



Գերմանիոյ Կոտբուս քաղաքին մէջ ընթացող մարմնամարզութեան առանձին գործիքներու աշխարհի գաւաթի խաղերու առաջին փուլին Հայաստանի ներկայացուցիչները 3 մետալ նուաճեցին: Ողիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր, աշխարհի եւ Եւրոպայի ախոյեան Արթուր Դաւթեան հիանալի հանդէս եկաւ հենացատկի եզրափակիչին եւ վաստակեց 15.133 կէտ՝ գրաւելով առաջին դիրքը: Հայաստանի միւս ներկայացուցիչ, երիտասարդ մարմնամարզիկ Գագիկ Խաչիկեան նժույզ թափերու վարժութեան մէջ գրաւեց երկրորդ տեղը՝ եզրափակիչին վաստակելով 14.833 կէտ: Արթուր Աւետիսեանն ալ պրոնզէ մետալ նուաճեց օղակներու վարժութեան մէջ՝ վաստակելով 14.533 կէտով:

### ԱՄՆ Աթլետիքի Հաւաքականի Նախկին Անդամը Հայաստանը Ներկայացնելու Իրաւունք Ստացած Է

Տարբեր տարածութիւններու վազորդ Ալիսոն Հալվերսընը պաշտօնապէս Հայաստանը ներկայացնելու իրաւունք ստացած է:



«Արմենիան»-ի հետ գրոցի ընթացքին Հայաստանի աթլետիքի ֆետերացիայի գլխաւոր քարտուղար Նարինէ Շահբազեան շեշտեց, որ Հալվերսընը Հայաստանի քաղաքացիութիւն ստացած էր դեռեւս 2019 թուականին, սակայն Աթլետիք միջազգային ֆետերացիայի կանոնակարգի համաձայն, ան չէր կարող փոխել քաղաքացիութիւնը եւ անմիջապէս ներկայացնել տուեալ երկիրը: Ան պարտաւոր էր սպասել 2 տարի, քանի որ ժամանակին հանդէս եկած է ԱՄՆ հաւաքականի կազմէն: Ալիսոն Հալվերսընը 31 տարեկան է:

### Միապէի Տուպլը Եւ Մեսիի Կոլը Յաղթանակ Բերին ՊՍԺ-ին

Ֆրանսայի առաջնութեան 25-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն հիւրընկալեց «Մարսելին» եւ յաղթանակի հասաւ 3:0 արդիւնքով:

Տուպլի հեղինակ դարձաւ ֆրանսացի յարձակող Կիլիան Միապէն: Երկու դէպքերուն ալ կոլային փոխանցում կատարեց արժենթիւնցի յարձակող Լիոնել Մեսին, որ նաեւ մէկ կոլ նշանակեց Միապէի փոխանցումէն յետոյ:

Լիոնել Մեսին 700-րդ կոլը նշանակեց ակումբային մակարդակի վրայ:

ՊՍԺ-ն 60 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 8 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Մարսելէն»:

### «Ալմերիան» Պատմութեան Մէջ Առաջին Անգամ Յաղթած Է «Պարսելոնային»

«Ալմերիան» պատմութեան մէջ առաջին անգամ յաղթած է «Պարսելոնային»: Սպանիոյ առաջնութեան 23-րդ հանգրուանին խումբը գաթալոնացիներուն յաղթած է 1:0 արդիւնքով:

«Պարսելոնան» երկրորդ պարտութիւնը կրեց այս առաջնութեան ընթացքին եւ 59 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 7 կէտի առաւելութիւն ունի երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Ռեալի» նկատմամբ:

### «Մանչըսթըր Եունայթըտ» 6 Տարի Անց Դարձեալ Տիտղոս Նուաճեց



«Մանչըսթըր Եունայթըտ» նուաճեց Անգլիական Լիկայի գաւաթը: Լոնտոնի «Ուեմպլի» դաշտին վրայ տեղի ունեցած եզրափակիչ խաղին հոլանտացի էրիկ տեն Հագի գլխաւորած խումբը մրցեցաւ «Նիւքասլ Եունայթըտի» հետ եւ պարտութեան մատնեց 2:0 արդիւնքով 2017-ին Եւրոպայի Լիկայի եւ Անգլիական Լիկայի գաւաթներուն տիրանալէ յետոյ «Մանչըսթըր Եունայթըտը» նուաճեց առաջին տիտղոսը:

### Լիոնել Մեսին Ստացաւ ՖիՖԱ-ի The Best Մրցանակը

Աշխարհի ախոյեան Արժանթինի հաւաքականի եւ Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի 35-ամեայ յարձակող Լիոնել Մեսին կը ստանայ 2022թ. աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստի The Best մրցանակը: Ֆուտպոլի միջազգային ֆետերացիայի (ՖիՖԱ) ամենամեայ մրցանակաբաշխութիւնը տեղի ունեցաւ Փետրուարի 27-ին Փարիզի մէջ:



Հաւակնորդներու եզրափակիչ եռեակին մէջ էին նաեւ աշխարհի փոխախոյեան Ֆրանսայի հաւաքականի եւ Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի 24-ամեայ յարձակող Կիլիան Միապէն եւ Սպանիոյ ախոյեան ու Ախոյեաններու լիկայի գաւաթակիր Մատրիտի «Ռեալի» 35-ամեայ ֆրանսացի յարձակող Գարիմ Բենզեման:

Անցած տարի ՖիՖԱ-ի վարկածով աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստ ճանաչուած էր լեհ յարձակող Ռոբերտ Լեւանդովսկին:

### «Ինթեր» Պարտուեցաւ Պոլոնիայի Մէջ

Իտալիոյ ֆուտպոլի առաջնութեան՝ Սերիա Ա-ի 24-րդ հանգրուանի շրջագիծէն ներս «Ինթեր» հիւրընկալեց «Պոլոնիային»:

Առաջին կէսին բաւականին ակտիւ կը գործէր Հենրիխ Միխիթարեանը, սակայն խումբերը, ի վերջոյ, ընդմիջման գացին ոչ-ոքի արդիւնքով:

Երկրորդ կէսին «Ինթեր» մի քանի վտանգաւոր պահեր ունէր, սակայն չի կրցաւ իրականացնել զանոնք: 76-րդ վայրկեանին, «Պոլոնիան» յաղթանակ ձեռք ձգեց պաշտպաններու սխալէն օգտուելով:

Հենրիխ Միխիթարեան փոխարինուեցաւ 64-րդ վայրկեանին:

### «Արսենալը» Ուժեղ Էր «Լեսթըրէն» Եւ 2 Կէտով Առաջ Է «Մանչըսթըր Սիթիէն»

Անգլիոյ առաջնութեան 25-րդ հանգրուանին առաջատար «Արսենալ» հիւրընկալեց «Լեսթըր Սիթիին»: Սպանացի Միկել Արտետայի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:

Լոնտոնեան խումբին յաղթանակ բերաւ պրագիլցի յարձակող Գաբրիէլ Մարտինելիի կոլը: Անոր արդիւնաւէտ փոխանցում կատարեց պելճիքացի յարձակող Լեանտրօ Տրոսարդը:

24 խաղէն յետոյ «Արսենալ» 57 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտի առաւելութիւն ունի երկրորդ տեղը ընթացող ախոյեան «Մանչըսթըր Սիթիի» նկատմամբ, որ արտագնայ խաղին 4:1 արդիւնքով յաղթեց «Պորսմութին»:

### «Ռեալը» Խուսափեցաւ Պարտութենէն «Աթլետիքոյի» շեւ Խաղին

Սպանիոյ առաջնութեան 23-րդ հանգրուանին ախոյեան «Ռեալը» ընդունեց «Աթլետիքոյին»: Մատրիտեան տերպիլի յաղթող յայտնի չեղաւ՝ 1:1: